

2994

Հ Պ ՏԵՂՈՐԾՎ

Եպիկեպչի  
Ընկառաւութեան




91471  
Բ-32

Եպիկեպչի գեղարված հայոց պատմութեան  
Տառապն • 1939

30 MAY 2011

UV

24 JAN 2006



Կուլիկովյան ճակատամարտը 1380 թ.  
Նկարիչ Ն. Նեկրասովի նկարից

Բ. Վ. ՖԵԴՈՐՈՎ

9(47)

Փ-32

Ա.Ի.

ՊԻԼԻԿՈՎՅԱՆ  
ԾԿԱՆԱԿԱՐՏԸ




ԹԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1939



6199  
39

Б. В. ФЕДОРОВ  
КУЛИКОВСКАЯ  
БИТВА

Государственное издательство полит. литературы  
Ереван ● 1939



ԱՐ-ԱԶԻՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ԹԱԹԱՐՆԵՐԻ ՀԵՏ

1223 թ. գարնանը ոռուսական իշխանները միանգամայն անսպասելիորեն անհանգստացան Անդրդղոյքան տափաստաններաւմ՝ թափառակրաց կիպչակներից (պոլովցիներից) ստացած այն տեղեկությունից, թե ոռուսական սահմաններին են մոտենում մինչեւ այդ անհայտ թշնամու անհամար հրոսակախմբեր :

Կոխվը թափառակյաց տափաստանային ժողովուրդների գեմ, իրենց սահմանների պաշտպանությունը նրանց հարձակումներից՝ ուղև մարդկանց համբար այն ժամանակ ամենորյա, սովորական յերեսույթ եր: Պատերը դեռ հեշում ելին կոխվն անվեհեր, խի- պախ թափառակյաց ժողովրդի—պէչենեզների գեմ, իսկ կոխվը կիպչակների (պոլովցիների) գեմ մղվում եր մինչև վերջին որերը:

Զնայած դրան, ոռւս իշխանները և ոռւսական յերկրի ամբողջ բնակչությունը խիստ անհանգստացած եր: Հատկապես տաղնալուի յեր այն, վոր մոտեցող թշնամին մինչ այդ բոլորովին անհայտ եր: Կանխալ հասնող համբավը և՛ զարմացնում եր, և՛ վախեցնում: Փրփրերախ ձիերի վրա մեկը մյուսի հետև-վեց յեկող կիպջակների հեծյալները հայտնում եյին, թե զորքերի թիվն անհամար է, նրանք հոծ մասսայով առաջ շարժվելով՝ վոչնչացնում են ճանապարհին հանդիպած ամեն ինչ և վոչ վոքի չեն խնայում: Պարզվեց, վոր անհայտ զորքերը թաթարներ են:

**Ծուտով լուրերն ավելի մռայլ դարձան—թաթարները գլխով ջին ջարդել եյին կիպչակների ամենասուժեղ խան Յուրի Կոնչակովիչին, իսկ ջախջախված կիպչակները փրկվելով՝ փախել եյին**

գեպի ոռւսական սահմանները։ Սրանից հետո խան Կուտանն (Կոտյան), իշխան Մատիսլավ Գալլիցկու աները, դիմեց ոռւս իշխաններին ողնության համար։ Տալով նրանց զանագան նվերներ՝ ձիեր, ուղարք, դոմեներ և գերիներ՝ նա նախազուշացնում էր նրանց թաթարական զորավարների խարդախություններից և համառիքն համոզում էր, թե անհրաժեշտ է միացյալ ուժերով թաթարներին հակառարված տալ։

«Իսկ յեթե մեզ չողնեք, —ասում էր նա, —ապա մենք կջարովենք հիմա, իսկ դուք վալլ»։

Կիեվում հրավիրված խորհրդակցության ժամանակ ոռւս իշխանները համաձայնելով ողնել կիպչակներին, միանդամայն ճիշտ վորոշում ընդունեցին՝ դուրս դալ թշնամու դեմ չսպասելով նրա հարձակմանը։

Իմանալով ոռւս իշխանների արշավանքի մասին՝ թաթարական զորավարները փորձեցին հետ կանգնեցնել նրանց կիպչակներին ողնություն ցույց տալուց։

Յերկու անգամ նրանք հատում լիազորներ ուղարկեցին, վարոնց խնդիրն եր ցըել ոռւսների կասկածը, բարեկամ ձեանալ և խարեբայությամբ ստիպել խոելու կազմը կիպչակների հետ։

Ոռւս իշխանները չենթարկեցին այդ հորդորներին, և սկսված արշավը շարունակվեց։ Ոռւսների և պոլովցիների միացյալ գնդերը մեծ ուժ ելին ներկայացնում։ Առաջին ընդհարումները թաթարների պահպանական պահակակետի հետ վերջացան թաթարների պարտությունով։ Հեշտությամբ հաղթահարելով այդ վոչ մեծ ջոկատներին՝ դաշնակիցների գնդերը հասան մինչեւ Կալկա գետը, ուր հանդիպեցին թաթարների զլիսավոր ուժերի հետ։

Այսուղեւ, Կալկա գետի մոտ, հունիսի 16-ին տեղի ունեցավ վասկան ձակատամարտը։

Յերկարատեւ, գաման հակատամարտը վերջացավ ոռւս զորքերի դեռևս չտեսնված պարտությամբ։ Պարտության զլիսավոր պատճառը միասնության բացակայությունն եր ոռւս իշխանների միջև, անջատ և իրարից անկախ զործելու նրանց սովորությունը, ընդհանուր զեկալարության բացակայությունը, նրանց փոխագործ վեճերն ու մշտական պայքարը։

Ճակատամարտը շատ իշխանների հանկարծակի բերեց։ Մըտիւլավ Գալլիցին հարձակվեց թաթարների վրա իր և կիպչակների գնդերով և ցցանկանալով փառքը վոչ փոքի հետ բաժանել վոչ վոքի չպուշացրեց իր զործողությունների մասին։

Ոռւսական մի քանի գնդերում մարդիկ անդամ ապառազին-

ված չելին և խաղաղ հանդստանում ելին։ Թաթարների կողմից վրախուսի մատնված կիպչակները վունատակ արին այդ գնդերը։ Արյունահեղ մարտի յելքը վորոշված էր։ Զնայած առանձին գրուժիների, ջոկատների, գնդերի հերոսական դիմաշրությանը, ոռւսական զորքերը ջախախտվեցին։

Հին տարեգրությունը, պատմելով այդ մարտի ժամանակն, տըխուրությամբ և վրդովմունքով և խոսում հաղթողների խարդախուրությունների մասին։ Խարեբայությամբ գերի վերցված ոռւս իշխանները տանջանքի յեն յենթարկվում թաթարների զինվորական պետերի կողմից։ Նրանց կապկապած զնում են տախտակների տակ, վորոնց վրա հետո թաթարները նստում են ճաշկերույթի։

Սարսափելի լուրն արագորեն տարածվեց ոռւսական վայրերում։ Սարսափը բռնեց բոլորին։ Հետապնդելով ջախջախության սահմաններին՝ թաթարները մոտեցան կիվիլի իշխանության սահմաններին։ Գյուղերի և քաղաքների բնակիչները, սարսափահար յեղած այդ ամբողջ անցուդարձից, նրանց դիմավորում ելին խոնարհաբար, բայց թաթարները վոչ վոքի չելին խնայում։ Թվում եր, թե Ռուսաստանի վերջը յեկել է։ Սակայն թաթարները հանկարծ հատկան և մի քանի տարով անհետացն։

## ՈՎՔԵՐ ԵՅԻՆ ԹԱԹԱՐՆԵՐԸ, ՎՈՐՏԵՂԻՑ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ՆՐԱՆՔ ՅԵՐԵՎԱՑԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՈՂԻ ՎՐԱ

Մինչ այս անհայտ՝ դաժան թշնամու հանկարծակի յերեալը, ոռւսական միացյալ գնդերի վողբերդական բախտը, և վերջապես յեկիվորների հանկարծակի անհետանալը խորապես ցնցեց ոռւսների դիտակցությունը։ Այդ դեպքի մասին տարեգրի միամիտ, զարմանքով լի սկասմությունն արատացուր և ընդհանուր շփությունը։ «Նրանց թաթար են կոչում, ուրիշներն ասում են տառերմեն, մյուսներն ասում են պեչենեղ... Միայն աստծուն ե հայտնի, թե ովքե՞ր ելին դրանք և վո՛րտեղից յեկան»։

Միակ բացատրությունը, վոր իրագարձությանը կարողացավ տալ տարեգրերը, դա ամեն ինչ աստծու կամքին վերադրելն է, վոր երր թե պատժեց ոռւսներին։

Մինչդեռ թաթարական հրոսակախմբերի յերեալն Անդրդոնյան հարավային տափաստաններում մարդկության գլամի մասի

սկամական ճակատագրի մեջ հսկայական նշանակություն ունեցող խոշորագույն դեպքի հետևանք է:

XIII դարում Մոնղոլիայում՝ մինչ այդ անջատ-անջատ մոնղոլական ցեղերից գոյացավ մոնղոլական ռազմա-ֆեոդալական մեծ պետությունը: Այդ պետության գլուխ կանգնեց Չինգիս-խանը, այսինքն՝ մեծ թագավորը, զորավար Տեմուչինը, վոր այդ ժամանակ մոնղոլների շրջանում մեծ հռչակ ուներ: Չախչախելով իր հարևան թաթարներին, վորոնց գեմ կովելիս լնկավ Տեմուչինի հայրը, Տեմուչինի ցեղն ընդունեց մոնղոլ-թաթար անունը:

Չինգիս-խանն իրեն յենթակա մոնղոլական բոլոր ցեղերը միացրեց կազմակերպված մեկ ամբողջության մեջ: Չինգիս-խանի պետությունն իր բնույթով ռազմական եր և պատերազմի ու նվաճումների նպատակ եր հետապնդում: Պետության հասարակական կառուցվածքը միաժամանակ ռազմակերպություն եր հանգիստանում: Բաժանմելով տաս հազարյակների («բյուրյակների»), հազարյակների, հարյուրյակների և տասնյակների, մոնղոլական ցեղերը և տոհմերը կատարելով ֆեոդալական-տնտեսական պարհակ, դրա հետ մեկտեղ զինվորական ծառայություն ելին կատարում:

Թաթարական զորքի մեջ մարտական հիմնական միավորը ջոկատն եր՝ հարյուր մարդուց կազմված: Հեծյաները կանդնում ելին տաս մարդուց կազմված շարքով: Հակառակորդի հարձակման դեպքում յերկրորդ շարքը յերկար նիզակները դնում եր առաջինների ուսերին, և այսպիսով ստացվում եր նիզակների յերկու շարք: Տասնյակին գլուխ կանգնած եր տասնապետը, վոր ինալ զինվորների հրամանատար եր. հարյուրյակին գլուխ կանգնած եր հարյուրապետը, վոր անպայման ուներ իր տասնյակը. հազարյակին գլուխ կանգնած եր հազարապետը: Տաս հազարյաց բաղկացած զորամասը կոչվում եր «բյուրյակ», իսկ նրա պետը՝ «բյուրյակապետ»:

Վերջացնելով մոնղոլական ցեղերի միացումն իր իշխանության ներքո՝ Չինգիս-խանը կարճ ժամանակում հպատակեցրեց չյուսային Չինաստանը և յերեք տարի չանցած՝ նվաճեց ամբողջ Միջին Ասիան (Թուրքեստանը): Մոնղոլական զորամասերի մի ժամը Զերե և Սուբեդե զորավարների հրամանատարությամբ ուղարկեց իրան՝ փախած խորեզմական շահին հետապնդելու համար վորի հետքերով այդ զորավարները շարժվեցին Հյուսիսին իրանով դեպի Կովկաս և Շիրվանի ձորով անցան:

սիսային Կովկաս, շարժվեցին դեպի Վոլգայի և Դանուբի միջև գտնվող կիպչակների հողերը և ջարդեցին ոռու-կիպչակյան ուժերը Կալկա գետի վրա: Ոռուսական իշխաններին ջարդելուց հետո Վոլգայով բարձրանալով դեպի Կամայի գետաբերանը, մոնղուական հրոսակախմբերը մոտեցան բուլգարների հողերին, բայց այստեղ լուրջ պարտություն կրեցին և հետ կանչվելով Չինգիսխանի կողմից՝ վերադարձան Ասիա:

Թաթարները բառիս ճշգրիտ իմաստով՝ այդ հրոսակախմբերում համեմատաբար շատ չելին: Նրանք մոնղոլական զորամասերի հիմնական կորիզն ելին կազմում և հրամանատարական պաշտոն ելին վարում: Չինգիս-խանի զորքերի ճնշող մեծամասնությունը վոչ թաթարներից եր կազմված, այլ թուրքական զանազան ցեղերից: Տարբերություն չդնելով նվաճողների միջև՝ ժամանակակիցների նրանց ընդհանուր անունով թաթար կոչեցին:

Չինգիս-խանի կողմից հսկայական հողերի և բազմաթիվ ժողովուրդների նվաճումներն առանց կանոնական արագությամբ ալեկոծեցին և վախեցրեցին բոլոր ժամանակակիցներին: Վո՛չ Միջին Ասիայում, վո՛չ Յեվրոպայում չկար մի յերկիր, ուր թաթարական արշավանքը չգնահատվեր վորպես մեծագույն աղետ, վոր կործանում և սպանում կուլտուրական բոլոր յերկրներին:

Գարսկական մի պատմաբան այսպես է բնութագրում թաթարական նվաճողներին. «Նրանք ունելին առյօնի արիություն, զառնակի կանխատեսություն, աղվեսի խորամանկություն, աղումի հեռատեսություն, զայլի գիշատչություն, աղուրի մարտական յեռանդ, հավի հողատարություն գեղագիտի մոտիկները, կատվի զգաստություն և վարագի մոլենություն հարցակման ժամանակ»:

Չինգիս-խանի ժամանակ ապրած արաբական սրատմաբան իրնելլ-Ասիրան թաթարական արշավանքի իր նկարագրության մեջ գրում ե. «Ահա (ինչպես տեղի ունեցան այդ) դեպքերը, վորի կայծերը թուան (բոլոր կողմերը) և վորի շարիքը տարածվեց բոլորի վրա. ամենուրեք նա տարածվում եր ինչպես ամպ, վորին քշում և քամին»:

Այն յերկրները, վորտեղից անցավ այդ ամպը, թալանվեցին և ամայացան: Չինգիս-խանի ոռազմական գլխավոր որենքերից մեկն ասում եր, թե թշնամուն չի կարելի ինայել, վորովհանայելու արդյունքը լինում է խղճահարությունը, իսկ այս զգացմունքը պետք է զինվորին անծանոթ լինի:

Իբն-հլբ-Ասիրան պատմում և կովկասյան մի քանի ժողովությաների համարյա զլիսովին վոչնչացման մասին, վորոնց մնացորդներն ապաստան գտան Գաղտնանի բազմաթիվ ձորերում:

Վոչնչացան Միջին Ասիրյի առավել նշանակալից քաղաքների՝ Բուխարայի, Սամարկանդի, Մերզի և այլ տեղերի բնակեները:

Վարպետ կանոն՝ թաթարական հրոսակախմբերն ավերում եյին քաղաքի ճանապարհին հանդիպած ամեն ինչ: Անդամ յեթե քաղաքի բնակչությունն անմիջապես հնազանդվում եր, միենույն, քաղաքն ավերվում եր, իսկ բնակիչներին առաջարկվում եր անմիջապես թողնել իրենց բնակարանները և զնալ քաղաքի դժբաղություն: Սովորաբար քաղաքն ավերելուց հետո տեղի յեր ունում կենդանի մնացած բնակչության բաժանումը: Գերիներին կամ ստրուկներ եյին դարձնում կամ ոգտագործում եյին զինվորական կարիքների համար:

Եյն յերկրները, վորտեղից անցնում եյին թաթարները, տասնյակ տարիներով չեյին կարողանում վոտքի կանգնել կատարված ավերածությունից: Շատ ժողովուրդներ, վոր այն ժամանակ ապրում եյին այն յերկրամասերում, վորոնք հիմա մտնում են Խորհրդային Միության Հանրապետությունների կազմի մեջ, ջախջախվեցին և քայլքայլեցին յերկար ժամանակով: Միջին Ասիրյի բոլոր բարբարած քաղաքները դարձել եյին անմարդաբնակ ավերակներ: Արվեստի և արհեստների զարդացումն ընդհատվեց: Ավերպած շատ քաղաքների բնակչությունը փախուստի դիմեց, և այդ քաղաքներն այլևս չվերականցնեցին: Այդ քաղաքների մի մասից ներկայումս միայն վելատակներ են մնացել:

Թաթարական հրոսակախմբերը մեծ ավերածություն կատարեցին Հայոսատանում և Վրաստանում:

Առաջին շրջանում թաթարները սահմանափակվեցին վրաց ժողովրդից տուրք զանձելով և սունդակ զորքեր տրամադրելու պահանջով, իսկ հետագայում սկսեցին միջամուխ լինել յերկրի ներքին կյանքին: Դա կործանարար անդրադարձալ ամբողջ աղոտեսության վրա: Առևտուրն ընկալ: Արհեստները խիստ կրծատվեցին: Հսկայական քանակությամբ դյուլացիներ փախան իրենց կողմից մշակվող իշխանական հողերից: Մինչ այդ բարբարական վրացական շատ գալապոներ ամայացան:

Թաթարական զորքերի ռազմական հաջողությունները բացատրվում են մի շարք պատճառներով՝ նրանց բազմաթվությամբ,

մարտական վիրաձառությամբ, անթերի զինվորական կարդապահությամբ, մեծ շարժունակությամբ, զորքերի ճկուն կազմակերպությամբ և ուղմական տեխնիկայի գերազանցությամբ:

Թաթարական զորքի մեջ հետևակ գնդեր չկային: Բոլոր զինվորները ձխավոր եյին, իսկ վորպես քոչվոր ժողովուրդ՝ թաթարները միշտ ունեյին ձիերի մեծ պաշար և մարտի ժամանակ հաջախ ձիերը փոխում եյին և նոր ձիեր հեծնում:

Թաթարների սպառաղինումը բաղկացած եր նետերից, կապարձից, նիզակներից, տապարից և պաշարողական թնդանոթներ (բաբաններ) քաշող պարաններից:

Հակառակորդին ձիերի վրայից քաշելու համար՝ նիզակների վրա հատուկ կեռեր եյին ամրացված: Այդ նույն նպատակով թաթարական յուրաքանչյուր զինվոր հատուկ ողակապարան ուներ: Բացի դրանից յուրաքանչյուր զինվոր պետք ե ունենար խարտոց, զենքը սրելու համար, մախաթ, ասեղներ, թել և վորոտարձակ. Հարուստներն ունեյին կեռ թուր, հազնում եյին յերկաթյա սազավար և կաշիք թիթեղապատ զրահ:

Քաջազները պաշարելու և քաղաքների պատերը քանդելու համար թաթարները՝ զանազան մեքենաներ եյին գործածում: Նրանք ունեյին մեծ քանակությամբ պատ քանդող մեքենաներ (բաբան, քանդիչ) և մեքենաներ, վորոնք հեռվից պաշարված քաղաքի վրա նետում եյին հսկայական նետեր՝ վառվող նավթով: Բերդերը քանդելու տեխնիկան զգալի չափով փոխ եր առնված ջինաստանից, վառվող նավթից ոգտվել կարողանալը թաթարներին նշանակելի գերակություն եր տալիս: Փայտից կառուցված և ճոպանների միջոցով շարժման մեջ դրվող զանազան տեսակի մեքենաներին չեյին կարողանում դիմանալ Միջին Ասիրյի, Զինաստանի և Յեփրոպայի կավե և քարե պատերը: Յուրահատուկ նունակները՝ կավե ամանները վառվող նավթով, վորոնք հեռվից մեքենաների միջոցով նետվում եյին պաշարված քաղաքների վրա, հսկայական հրդեհներ եյին առաջացնում, իսկ քաղաքների պաշտուանները վառվող նոնակներին և նետերին վաչինչ չեյին կարողանում հսկադրել:

Թաթարների տարած հաղթանակների գործում քիչ դեր չխացաց նենդության և խարեյության նրանց տակտիկան:

Նրանց տակտիկայի զինվոր առանձնահատկությունն եր՝ ձուակներ թշնամուն հաղթել վոչ այնքան ուժով, վորքան խորաման կությամբ: Շատ հաճախ հանդիպելով պաշարված քաղաքի քա-

շարի յերկարատև գիմաղըությանը, նրան առաջարկում ելին հստարակած հանձնվել, ընդվորում՝ յերդումով խոստում ելին տալիս վոչ վոքի ձեռք չտալ. բայց հենց զոր նրանց առաջ բացում ելին քաղաքի գարպատները, նրանք իսկույն կոտորում ելին նրա բոլոր պաշտպաններին, կոտորում կամ դերի ելին վերցնում բնակիչներին: Հակառակորդին խաբելու համար նրանք ձևացնում ելին, թե նահանջում են, աշխատելով նրան զցել նախորոք սարքված ծուղակը: Թաթարների սիրած միջոցն եր՝ հակառակորդին շըջապատել բոլոր կողմերից: Հաղթելով մի վորեւ յերկրի, թաթարներն անմիջապես նրանցից ոժանդակ զորք ելին պահանջում, վորի հետևանքով նրանց հրասակախմբերի թիվը չարունակ աճում եր: Ոժանդակ այդ զորքերն ուղարկվում ելին ամենավտանգավոր տեղերը: Թաթարների հիմնական ուժերը օրա հետևանքով միշտ թարմ ելին և համեմատաբար քիչ կորուստներ ելին տալիս: Հակառամարտի գաշտից փախչողը կամ ճակատամարտին մասնակցելուց խուսափողն անմիջապես յինթարկվում եր մահապատժի:

Բաղկացած լինելով քոչվորներից, վորոնք ամբողջ ժամանակ սկսած ելին վարում և իրենց ունեցվածքը փոխադրում ելին իրենց հետ, թաթարական զորքն ըստ եյտթյան զինված քոչվոր ժողովուրդ եր հանդիսանում: Զնայած անընդհատ կոխվներին, նրանք իրենց ընտանիքը և ամբողջ ունեցվածքը փոխադրում ելին իրենց հետ: Կապված ըինելով վորեւ մշտական ընակալայրի հետ՝ թաթարներն աչքի ելին ընկնում մեծ չարժունակությամբ: Միակ բանը, վորի կազիօք նրանք միշտ զդում ելին, դա կերն եր ձիերի և անսառների համար: Վորպեսզի իրենց ձիերի մարտունակությունը պահպաննեն, թաթարներն ամեն տարի մի քանի ամիս կանոն ելին առնում, վորի ընթացքում ձիերը հանգստանում ելին և ուժեղ մնվում: Իրենց հանդիսան ապահով անցկացնելու և ամեն տեսակի անսպասելի հարձակումներից նախազդուշանկու համար՝ թաթարները, նախքան կանգ առնելը, բավական մեծ տարածության վրա ամայացնում ելին իրենց զորակայքի շըջապատրում յեղած հողերը:

Շարժումակ, ճկուն, լավ կարդապահ, միասնական հրամանատարության յինթարկված թաթարական բանակը զորեղ ուժ եր ներկայացնում, հատկապես վտանգավոր՝ այն յերկրների համար, ուր չկար ուժեղ, կենտրոնացած պետական իշխանությունը անհաջող կազմակերպելու համար կամ առնելը, կազմակերպել անհրաժեշտ պաշտպանություն:

## ՌՈՒՍՍԱՆՑ ԹԱԹԱՐԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔԻՑ ԱՌԱՋ

XII դարի վերջում, այսինքն թաթարների հետ ունեցած առաջին ընդհարումից քիչ առաջ, Ռուսաստանը գտնվում եր Փեռքալական մասնատվածության ոլայմաններում: Առաջներում հզոր, Հունաստանի, վաչկատուն և այլ ժողովուրդների հետ հաղթական պատերազմ վարած Կիեվյան պետությունն աստիճանաբար բաժանվել եր մի չարք մանր ինքնուրույն իշխանությունների: Կիեվի պետության բաժան-բաժան լինելը բացատրվում է նրանով, վոր յերկրում զարդանում եր խոչը հողատիրությունը:

Խոչը հողատերերը—իշխանները և բոյարները—դրավում ելին հողերը, սարկացնում ելին նրա վրա ապրող ամերզներին (դյուղացիներին), ստիպում ելին նրանց աշխատել իշխանական և բայրական հողերի վրա՝ ազատ ամերզներին դարձնելով Փեղակալից կամաված ծորագյացի: Այս ձևով առաջացան նոր արտադրական հարաբերություններ—Փեղակալական հարաբերությունները: Կիեվի պետության մեջ մտնող Փեղակալական առանձին իշխանությունները տնտեսապես և քաղաքականապես անեցին: Յուրաքանչյուրը իշխան ձգուում եր առանձնանալ, իր իշխանությունն անկախ գարձնել մյուս իշխանություններից: Առանձին իշխաններ հարստանում ելին և դառնում ելին կիեվի մեծ իշխանից անկախ:

Բաժանված մի չարք մանր, ցրված, իրար հանդեպ միշտ թշնամանք տածող Փեղակալական իշխանությունների, յերկիրն ի վիճակի չեր գիմաղըելու իրեն շըջապատող բազմաթիվ հավատակին:

Պոլովցիները, լեհերը, գերմանացիները, լիտովցիները, հունգարացիները, ոգովելով նախկինում հզոր հարեւանի աճող թուլությունից, աստիճանաբար գրավում ելին Պոլացկի, Գալիչի, Վոլինի և Սմոլենսկի իշխանություններին պատկանող հողերը:

«Ասք ոռւսական հողի անկման մասին» պատմապրոյցի անհայտ հեղինակը, շըջազննելով Կիեվի հողերի նախկին սահմանական, ցավելով հիշում և, վոր Վակիորդի և Վլադիմիր Մանոմափի որով՝ «Լիտվան չեր համարձակվում գուրս գալ իր ճահճներից, իսկ ուգրիները (հունգարները) քարե քաղաքներն ամրացնում ելին յերկաթե քարպատներով... իսկ դերմանացիները ուրախանում ելին, վոր գտնվում են հեռու, կապույտ ծովի հեռախանում յերկրի և մեծության այդ ժամանելը»: Կիեվի իշխանության շուքի և մեծության այդ ժամանելը:

նակն անցավ։ Սակայն Կիկի իշխանությունից առանձնացան տնտեսական և քաղաքական մի քանի նոր կենտրոններ, վորոնցից ամենակարևորները և ուժեղներն ելին՝ Մեծ Նովգորոդը, Գոլյօչ-Վոլինական յերկիրը և Սուզդալի յերկիրը։

Կիկի պետության նախկին մասեր հանդիսացող այս կիսապետությունների բախտերը տարբեր են։

Ամենից ցայտուն կերպով աչքի յեր ընկնում Նովգորոդը, վոր արիստոկրատական, Փեղալական ամենահարուստ հանրապետությունն եր, վորտեղ ամբողջ հարստությունը կենտրոնացած եր բոյարների և վաճառականների ձեռքին, իսկ քաղաքական իշխանությունը, ժողովրդական վեչեյի ֆորմալ գոյության պայմաններում, փաստորեն պատկանում եր խոչոր Փեղալներին—բոյարներին։ Իշխանների տիրապետությունը Նովգորոդում ուահմանափակված եր Նովգորոդի բոյարներով։ Նովգորոդին յենթակա յեր հսկայական տարածություն՝ բնակչած կարեններով, լոպարներով, կոմիներով, ուղմուրաններով, ուտյակներով և այլ ժողովուրդներով, վորոնք տուրք եյին տալիս Նովգորոդցիներին և աշխատում եյին նրանց կողմից կաղմակերպված աղի և անտառային արհեստագործություններում։ Բացի այդ՝ մինչև Ռուրալ և Սպիտակ ծովը համազարդավալ գաղութների շահագործումից Նովգորոդի բոյարները, վաճառականները և բարձր հոգևորականությունը հսկայական հարստություն եյին կուտակել գյուղական բնակչության—սմերդների շահագործումից։ Դրա հետ միասին, Նովգորոդի տնտեսական կյանքում մեծ դեր եր խաղում նաև առևտուրը։

Արտակարգ բարենպաստ դերք գրավելով «Վարյագից դեպի Հունաստան» (Ֆիննական ծոց—Նեվա—Լաղողայի լիճ—Վոլխով—Իլմեն—Լուխա—Արեմոյան Դվինա—Դնեպր—Սև ծով) ջրային մեծ ճանապարհին, Նովգորոդն այդ ճանապարհները փակվելուց հետո բոլորովին չտուժեց իր առեւտրի զարգացման գործում։

Թուսական առեւտրը Ասիայի հետ կապող կենտրոնն առաջ Հունաստանն եր։ Առեւտրական ճանապարհները դեպի Միջերկրական ծովը առեղափոխվելուց հետո կապող այգախի կետեր դարձան դերմանական ծովածերձ քաղաքները, վորոնք XIII դարդում կազմեցին մեծ, հզոր առեւտրական միություն, վոր կոչվեց Հանգամ կամ Հանգեյական միություն։ Առլսանքների փոխադրումը Նովգորոդ կատարվում եր յերկու ճանապարհով, ամեառը նավերով։ Բալթիկ ծովով, Նեվա գետով, Լադոգայի լճով և Վոլխով



Բոյարական արքական գաղութ XIII դարում  
Պետ. պասմական թանգարանի մակետ-էպուզիալիա

զետով, իսկ ձմեռը՝ ցամաքային ճանապարհով—Պոկովի և Նար-  
վայի վրայով:

Գյուղացիական բնակչության և յենթակա մարդերի շահա-  
գործումը, առևտրի լայն զարգացումը, Նովոռոսովի տիրող դա-  
սակարգի հարստության անընդհատ աճման, իշխանների տիրա-  
կալությունից նրանց անկախության աճման հիմքն եր:

Վորպիս առևտրական խոշոր կենարոն՝ Նովոռոսով կապված  
եր սուսական բոլոր հողերի և մարդերի հետ և նրանց մեջ դրա-  
վում եր միանդամայն հատուկ և ինքնուրույն դիրք:

Ռուսական հողերի հարավ-արևմտյան մասում XII դարում  
Գալիչի և Վոլինի իշխանությունները միացան Վոլինի իշխան  
Բոման Մատիսլավովիչի իշխանության ներքո:

Վոլինի իշխանությունն իր դիմավոր քաղաք Վլադիմիր-  
Վոլինսկիով տարածվում եր Սրբամտյան Բուդի աջ ափից և հաս-  
նում եր մինչև Հարավային Բուգը: Գալիչի իշխանությունը  
բաղկացած եր յերկու մասից—Լեռնային և հարթավայրային:  
Լեռնային մասը Գալիչ գլխավոր քաղաքով ընկած եր Կարպա-  
տյան լեռների արևելյան լանջերում: Հարթավայրային մասը  
ընկած եր գետի հյուսիս, գետի արևմտյան Բուգը և կոչվում եր  
«Զերվենսկի քաղաքներ»: Այդ իշխանություններից ամենաուժեղը  
Գալիչին եր, վոր Յարոսլավ Ռոմոնիս որով բոլորի կողմից  
մանաշչած հզորության հասավ և գովերդվեց «Ասք Իդորի ար-  
շավի մասին»-ի հեղինակի կողմից: Թի վորքան մեծ եր Գալիչի  
իշխանի նշանակությունը, կարելի յե դատել պատեի նրան ուղ-  
ղած խոսքերից.

«Գալիչի Յարոսլավ Ռոմոնիսը: Բարձր ես զու նստած քո  
վոսկեհուռ գահին, քո ուժեղ գնդերով նեցուկ դառնալով կար-  
պատյան լեռներին (հեղինակն ուսում ե ասել, թե Յարոսլավը  
հաջող մեծ մարտեր մղեց հունդարական թագավորի գեմ և ամ-  
րացրեց Կարպատները տանող մատուցները: Բ. Ֆ.), վակելով  
ճանապարհը զետի Դանուբի ակունքը, և այդ գետով կատարվող ամ-  
բողջ առևտուրը նրա ձեռքին եր գանձում: Բ. Ֆ., ծանրու-  
թյունները վոխաղելով մառախուզների միջոցով (զորքերը և  
առևտրական գումակը վոխաղելով մառախուզով պատած լեռ-  
նային ճանապարհներով: Բ. Ֆ.), զատաստան տեսնելով մինչև  
Դանուբ: Քո ահարկու սխրագործությունների համբավը տա-  
րածվում ե բոլոր յերկրները, գու բացում ես Կիևի գոները  
(այսինքն՝ հասար այն բանին՝ վոր Կիևի ապրանքները գան Գա-

իմի յերկիրը:—Բ. Ֆ.), հայրական վոսկե գահից պարտության և մատնում ոտար յերկրների ոռոլթաններին (Գալիչի իշխանների մասնակցությունը Բյուզանդիայի կովին թուրքերի դեմ:—Բ. Ֆ.)»:

Հետեւապես, «Ասք իդորի արշավի մասին»—ի հեղինակին Հայոնի եյին Յարուլավի Հարաբերություններն ոտարերկրյա պետությանների հետ և նրա աղղեցությունը կիեվյան զործերի վրա:

Զնայած Գալիչի իշխանների՝ բոլորի կողմից ճանաչված չզարությանը, նրանց իշխանությունը բուն տիրակալարության մեջ նշանակելի չափով՝ սահմանափակված եր բոյարական արխուուկրատիայի կողմից: Վոլինի և Գալիչի իշխանությունները միանալուց հետ Ռուման Մատիուլավովիչը բացահայտ պայքար տարավ բյուրների դեմ, բայց Փեողալներին վերջնականապես կառել նրան չաւզովից: Ռուման Մատիուլավովիչի տղան—Դանիլ Բումանովիչը, պայտիորեն ամրանդեց իշխանների տիրապետությունը և ամենի բարձրացրեց Գալիչի-Դոլինի իշխանության նշանակությունը, առկային նա, ինչպես և իր հայրը, չկարողացավ իր համբին յենթարկել ընյարական, Փեոդալական արխոսուկրատիային: Ներքին յերկարակությամբ ծվատվող, ըջապատված Գալիչի-Վոլինի հարուստ հողերին գալիք պես նայող ուժեղ հարևաններով—Եկեղիք, Հունգարացիներով, Ալավացիներով, Գալիչի-Վոլինի իշխանությունը, չնայած քաղաքային բնակչությանը մեծ համակրությանը, ի վիճակի չեղավ հաղթահարելու Փեոդալների դիմագրությունը և դառնարու ուստական հողերի աղջային միավորման կենտրոն:

Ռուսական ժողովրդի հետագա պատմության մեջ յուրովին հասուկ նշանակություն ունեցան Հյուսիս-արևելյան Փեոդալական իշխանությունները:

Հյուրեջում 1097 թ. գումարված իշխանների համագումարում Ալոգալյան յերկիրը առնելին Վլադիմիր Մանոմաթին, Վորի ժառանդաններին հետաղյում ել այն ժամաց: Առաջներում քիչ բնակչություն ունեցող Ալոգալյան յերկիրը չափազանց բարենապատ դիրք ուներ: Անհանգիստ հարավից նա բաժանալած եր համատարած, անանցանելի, խոտ անտառային շերտով: Հյուսիս-արեւիլյան Խուսինայի բնակչության հիմնական մասամբ կազմում եր գարերից ի վեր այստեղ ապրող սլավոնական մեծ ցեղը—վյատիչները: Հետագայում այստեղ սկսեցին բնակություն հաստատել ուղարկան դաղութայինները, վորոնք յեկել եյին Նովգորոդից, Միջին Պոգանյից, ինչպես և Դնեպրի վերեներից:

Սուլդալի իշխանության տնտեսական զարդացման համար տեծ նշանակություն ուներ Ջրային հարմար ճանապարհների նրա գերքը, վորը նրան կապում եր Նովգորոդի, Բուլղարական թագավորության և Ղրիմի հետ: Սուլդալական լայն հողերի սահմաններում եր գտնվում Ուկայի միջին և ցածր հոսանքը, Վոլգայի գերին և միջին Հոսանքը, Կլազմա գետը և Մոսկվա գետը: Ջրային այդ ճանապարհներով Նովգորոդուն ուղարկում եր իր ապրանքները ներքին ուղարկան մարզերը և ստանում եր իր համար անհրաժեշտ հաց: Այդ բնականաբար, Սուլդալյան յերկրի համար սպասավոր դրություն եր ստեղծում:

Անտառներով և գետերով հարուստ Սուլդալյան յերկիրը բնակչությանը հնարավորություն եր տալիս անտառային արհեստագործություններով զրադաշտելու (մեղմագահություն, խեժաթորություն, քրծենի և ճլոփ պատրաստելը, վորս և այլն), թեպետ և այսուեղ բնակչության զվարայի զբաղմունքը հողագործությունները: Սուլդալյան յերկրի տնտեսական արագ զարգացմը վատ արահայտություն դատավ նոր քաղաքների առաջացման մէջ, վորոնց մի մասն ինքնուրույն կերպով գոյացավ, իսկ մի մասը կառուցվեց իշխանների կողմից՝ բնակչությունից տուրք պատրաստավոր համար: Այսպես, որինակ, Յուրի Դոլորուկին կազակացեց Դմիտրով, Յուրյեվ-Պոլտի և Կոնստանտինով քաղաքները: Նրա որով առաջացան նաև այնպիսի քաղաքներ, ինչպես Տվերը, Կոռարուման, Գորոդեցը, Ստարոդուր, Գալիչը, Զվենիդորովը, Կիշուպոդը:

Նրա իշխանության մեջ առաջին անգամ (1147 թ.) տարեգիրը հիշատակում է Մոսկվա քաղաքը: Դրանից քիչ առաջ, Վլադիմիր Մանոմաթի որով կառուցվեց Վլադիմիր քաղաքը Կլազմա հետագա վրա: Այդ քաղաքների բնակիչների զվարայի մասսան—արհետավորները և առևտրականները—ամուր, հաստատ պետական իշխանության կարիք ունեցին և մեծ պատրաստակամությամբ պաշտպանում եյին Ալոգալյան յեկեներին, նրանց կողմից տեղական հին բոյարների դեմ մզվող պայքարում, վորոնք չեյին ուղում զրկվել Փեոդալական իրենց ինքնուրույնությունից և դիմադրում եյին իշխանների տիրապետության ամրապնդմանը:

Նոր քաղաքների բնակչության կողմից իշխանների պաշտպանությունը չեր կարող առելություն և թշնամանք չառաջացնել Սուլդալի հին Փեոդալների մեջ, վորոնց զլուխ կանգնած եյին Ռոստովի բոյարները: Հասուկ առելություն առաջացրեց բոլոր Նոր քաղաքներից ամենաակտիվը—Վլադիմիրը: Ռոստովի բոյար-

ները Վլաղիմիրի վրա նայում եյին, վորպես իր՝ նց արվարձանի վրա, իսկ նրա բնակիչներին իրենց ծառաներն եյին համարում։ «Վլաղիմիրը մեր իշխանության քաղաքը չեւհայտարարում եյին նրանք տարեգրի ասելով—սակայն մեր արվարձաննեւ, այնտեղ բնակվում են մեր դյուղացիներն ու սպասավորները, քարհատները և փայտագործները»<sup>1</sup>:

Բոյարների արհամարհական վերաբերմունքը Վլադիմիր քաղաքի հանդեպ միաժամանակ բողոք եր իշխանների տիրապետության ուժեղացման գեմ։ Սուլդալական իշխանների ձգտումը ինքնիշխանության և այդ յերկրում նրանց պայքարը Ռոստովի հին բոյարության դեմ՝ Սուլդալի իշխանության առանձնահատկությունն եր։

Լարված և յերկարատեւ այդ պայքարը դաժան բնույթ ուներ, մանավանդ վոր Ռոստովի բոյարներն ոժանդակություն եյին ստանում Նովգորոդի բոյարներից և Խյաղանի իշխաններից, վորոնք վախեցած եյին Սուլդալի իշխանության արագ աճումից և բարզաշաճումից: Վորքան ել Ռոստովի բոյարներն ընդդիմանում եյին, այնուամենայնիվ սուլդալական իշխանների ուժը, նշանակությունը և իշխանությունն արագ աճում եր, և Անդրեյ Բոդոլյուբսկու (1157—1175 թ. թ.) Սուլդալի իշխանությունը ռուսական մյուս իշխանությունների մեջ ամենահարուսան ու ուժեղն եղանակում:

1169 թ. գրավելով և ամայացնելով կիւը, Սուզդալի իշխան Անդրեյ Բոգոլյուբսկին մեծ իշխանության մայրաքաղաքը փոխադրեց իր սիրած քաղաք Վլադիմիրը։ Բոգոլյուբսկու իշխանենչ բնավորությունը, բոյարական ինքնակամության սահմանափակ-ման, վճռական և հետեւզական կենսագործումը նրա կողմէից, բոյարների հողերի գրավումը՝ նրա գեմ գրգռեցին վոչ միայն Ռոստովի բոյարությանը, այլև և նրան մոտիկ կանգնած շատ անձանդ։

Կրտսեր յեղայրներին նա հեռացրեց՝ իրենից, ջոկատի հետ  
հպարտ եր վերաբերվում, բարձրից եր նպայում, խորհուրդներ  
չեր հարցնում, առարկություններ չեր հանդուրժում։ Մի քանի  
բոյարներ մահապատճի յենթարկվեցին Բողոքությունուն կողմից։  
Պայքարն իշխանի միահեծան իշխանության համար ուժեղ անբա-  
վականություն առաջացրեց բոյարների մեջ, և 1175 թ. նա  
սպանվեց գավաղիքների կողմից։

Վլաղիմիրյան Անդրեյ Բոգոլյուբսկու սպանությանը պատասխանեցին ապատամբությունով։ Վլաղիմիրյաներին իրենց կողմը գրավէլու դավագիրքների վորձը հաջողություն չունեցավ։ Քաղաքի աշխատավոր բնակչության լայն մասսաները, վորոնք փուժում եյին բոյարների բռնությունից և իշխաններին ցույց տրվող ծառայություններից, նրանցից շատերին կոտորեցին և թայանեցին նրանց աները։

Անդրեյ Բոգոլյուբսկու սպանությունից հետո Ռուսավի բո-  
յարները վորպիս իշխան առաջադրեցին այն ժամանակ Ռյազա-  
նում ապրող Անդրեյ Բոգոլյուբսկու յեղորորդիներին—Մատի-  
սավ և Յարոպոլի Ռուսակավիչներին։ Սակայն վեպիմիքիները  
չհամաձայնեցին դրան և վորպիս իշխան հրավիրեցին Անդրեյ  
Բոգոլյուբսկու յեղբայր Միխայիլին։ Սկավեց պայքար, վորի ըն-  
թացքում Ռուսավի բոյարականության կողմից հովանավորվող-  
ները անարդել կողոպտում ելին նոր քաղաքները և ավարն ամ-  
սոսնովին ուղարկում ելին Ռյազան։

1177 թ. Միասնակիլիք մահից հետո վլադիմիրյանները Հայութ-  
քային Անդրբեյ Բողոքութակու յերկրորդ յեղայլ—Վասիլովոդին  
(1176—1212 թ. թ.): Խոստովիթ բոյարները փորձեցին զինված դի-  
մագրություն ցույց տալ, սակայն ջախճավախվեցին վլադիմիրյան-  
ների կողմից, վորից հետո Վասիլովոդը բռնագրավվեց խոռվարար բո-  
յարների հոգեբեն՝ ու գյուղերը և սրանով նրանց լուրջ հարված  
հասպես:

Իշխան Վահվոլով ԱՄ-ի որով, վորին չատ յերեխաներ ունեսալու պատճառով կոչում եյին «Մեծ բուն», Սուզդալյան յերկիրը մեծ ժաղկման և հղորության հասավ: Վահվոլովը հասավ այն բանին, վոր Նովգորոդն իր վորդի Սվյատոսլավին ընդունի վորակես Նովգորոդի իշխան, չհնազանդվելու համար այրեց Ռյազանը և Ռյազանի հողերը միացրեց Սուզդալյան իշխանությանը: Նրա ալվագությունը և հղորությունը ստիպված եյին ճանաչել բոլոր իշխանները: «Ասք իդորի արշավի մասին» դրվածքում դուքարանված Գալիչի իշխան Յարոսլավ Ռոմոնիսիւլը նրա ոժանդակությունն և վիճակում: «Հայր և տեր...—դիմում եր նա նրան—պահիր Գալիչը ինձ համար, իսկ յես աստծունն եմ և քոնն ամբողջ Գալիչով ու միշտ քո տրամադրության տակ»: Հիշելով Վահվոլովին, «Ասք իդորի արշավի մասին»-ի հեղինակն ասում է, վոր նա կարող է Դոնը դդակներով գատարել կամ Վոլցան թիակներով շալ տալ: Սակայն Սուզդալի իշխանության արտաքին հղորությունը դիմաս Վահվոլովին լրիվ հաղթանակ չեր տալիս Թու-

## Կայիկեռվան մակատամբարուր—2

տովի հին բոյաբության հանգեպ: Բոյաբության պայքարն իշխանական տիրապետության ուժեղացման դեմ դեռևս շարունակվում է:

Վաեկուրդի մահից հետո Թոստովի բոյարները, Հենակելով նրա  
ավագ տղա Կոնստանտինի վրա, վորը հոր կողմից զրկված եր  
մեծ իշխան դառնալու իրավունքից, և նովզուրուցիների վրա՝  
փորձեցին մեկ անգամ ել գրավել իշխանությունը։ Այս հատակ-  
ցությամբ Սուլլալի իշխանության մեջ մի քանի տարի տևող  
Փեռդալական պատերազմները հանդեցին այդ իշխանության բա-  
ժանմանը հինգ ինքնուրույն իշխանությունների—Վլադիմիրի,  
Թոստովի, Պերեյալավի, Յուրյեևի, Ստարոդուբի։ Վաեկուրդի  
տղաներից մեկը, Վլադիմիրի իշխան Յուրի Վաեկուրդիչը  
զգալի լայնացրեց իր տիրապետությունը մորդվական հողերը  
նվաճելով և իրեն յենթարկելով։ 1221 թ. այնտեղ, վորտեղ Ուկան  
թափուրու ե Վոլգան, վորտեղ Սուլլալի և Վլադիմիրի զորքերը  
Հավաքել եյին մորդվացիների և բուլգարների վրա արշակելու  
համար, այդտեղ նա հիմնադրեց Նիժնի-Նովգորոդը։

Վաելվուղի թոռների սրով Վլադիմիր-Սուզդլայան իշխանության մասնառումն ուժեղացավ։ Վլադիմիր-Սուզդլայան իշխանությունից անջատված մանր իշխանությունների ընդհանուր թիվը պատճերկաւի յեր համար է։ Նրանցից մեկը Սոսկվայի իշխանությունն եր, վորը Վլադիմիրի իշխանությունից առանձնացաւ։

Այսպիսով թաթարական արշավանքի նախորյակին ոռւստական հողը քաղաքականագես մասնատված էր : Յուրաքանչյուր մարզ, յուրաքանչյուր իշխանություն իր սեփական կանքով էր ապրում, մըցում էր մյուս իշխանությունների հետ և աշխատում էր ավելի թույլ հարեւանից խել այն, ինչ նա չեր կարողանում պաշտպանել : Մարզերի և իշխանությունների ներսում Փետպալական արիստոկրատիայի և իշխանների միջև անընդհատ պայքար էր մզգում իշխանության համար :

Մասնաւոված, մշտական յերկպառակություններով և Փեղալա-  
լական պատերազմներով քայլքայլող Ռուսական յերկիրն այն ժա-  
մանակ չեր կարող կանգնել ոտարերկրյա ուժեղ հակառակորդի—  
թաթարների դեմ:



## ԲԱՇԻ ԱՐԴԱՎԱՆՔԸ

Տեմուզինի մահից հետո (1227թ.) նա թոռ Բատում (Բատին) գորավար Սուբեզյի (Սուլուտայի) հետ միասին նոր իրան

Աւղեղեցի կողմից ուղարկվեց Հարավ-արևելյան Յելլըռուան նվաճելու համար։ Գրավելով Կասպից և Ազովյան ծովերի միջն ընկած բոլոր Հողերը, 1236 թ. Բատուն առաջ շարժվելով Վոլգայի միջին հոսանքով, ջախջախեց և իր իշխանությանը յենթարկեց Վոլգայի բուդարներին։ Հետեւ—1237 թ. Բատուն, մոտենալով Ռյազանի իշխանության սահմաններին, Ռյազանի իշխաներից պահանջեց հոգանդություն և առանձորդութուրք՝ յուրաքանչյուր իշխանից և հասարակ մարդկանցից, ինչպես և յուրաքանչյուր սպիտակ, մոխրագույն, շաղանակագույն, խարտյաշ և նաշունը ձիուց։ Ռյազանի իշխանները խորհրդակցելով Մուրմանսկի և Պրօնսկի իշխանների հետ, հրաժարվեցին թաթարական զինվորական պետքի պահանջը կատարելուց և վորոշեցին նրանց գիմադրություն ցույց տալ։ Հաշվի առնելով իրենց զորքերի վորքանակությունը, նրանք սրբություն ուղեցին Վլադիմիրի (Սուվորայի) մեծ իշխան Յուրի Վահվորդովիչից և Զերինի կամ իշխան Միհայիլ Վահվորդովիչից։ Յերկու տեղից ել նրանք մերժում ստացան։ Իրար զեմ պայքարող ֆեոդալների զժուությունները՝ իր հետևանքներով սոսկալի, բոլորի համար միատեսակ վտանգի դեմ հանդիման անգամ հնարավորություն չտվին բարձրանալու մինչև շահերի ընդհանրության հասկացողությունը։ Զերինի կողմանը հրաժարվեցին ոգնություն ուղարկելուց՝ վորակի վրեժիսնդրություն այն բանի համար, վոր ոյազանցիները չողնեցին նրանց Կալկայի վրա հարավ-ուստահան իշխանների արշավանքի ժամանակ, իսկ Վլադիմիր-Սուվորայի իշխան Յուրի Վահվորդովիչը կարծում էր, թե ինքը շահած կլինի, յեթե իր ուժեղ մրցակիցներից մեկը շախիցախիթի թաթարների կազմից։ Ռյազանի մեծ իշխան Յուրի Իզորեվիչը, նախատեսելով ոգնելուց հրաժարվելու հնարավորությունը, համենայն դեպի իր փոքր սպանեղորդին աշուառու նվերներով ուղարկեց թաթարների բանակատեղը։ Մակայն այս ևս չողնեց։ Թաթարները նվերը ներկայացուցիչներից վերցրին, առկայն նրանց բոլորին, այդ թվում նաև իշխանի տղա Ֆեոդորին; սպանեցին։

XIII դարի զրական շատ հետաքրքրական հուշարձաններից մեկը՝ «Ռյազանի պատմադրությը Բատուի արշավանքի մասին» ուրատաշարժ պատմություններ և անում իշխանագնի մահվան մասին։

Բայտ այդ պատմագրությունից՝ Բատուն սիրալիր ընդունեց Ռյազանի ներկայացուցիչներին և պատրաստ էր համաձայնության դալ նրանց հետ, սակայն այդ ժամանակի ինչ-վոր մի դավաճան բոյար նրան հայտնեց, թե Ֆեոդորի կինը—Յելլըռուաքսիան—չտես-

նըգած դեղեցկութիւնն ունի; Բատուն պահանջեց, վոր Ֆեոդոր  
Նրան տա իր կնոջը: Ֆեոդորն արժանապատվորեն պատասխա-  
նեց. «Յերբ մեզ Հաղթես՝ այն ժամանակ կտիրես նաև մեր կա-  
նանց»: Կատաղած Բատուն կարգադրեց սպանել Ֆեոդորին և նրա  
ուղեկիցներին: Իմանալով ամուսնու մահը, Յեփլաքսիան հուսա-  
հատությունից և թափծից իրեն գցեց բարձր պարսպի դադաթից  
և մահացավ: Պատմապրույցն ասում եւ, վոր այսուեղ հետապայում  
կառուցից Զարայսկ քաղաքը:

1237 թ. գեկտեմբերի 16-ին պաշարելով Ռյազանը՝ թաթար-  
ները, չնայած ոյազանցիների վեցորյա քաջարի դիմադրությանը,  
գրոհելով այն զրավեցին: Քաղաքը թալանից, այրվեց, իսկ  
բնակիչները կոտորվեցին: Խուժելով Ռյազանի յերկիրը՝ թաթար-  
ներն անխնա կողապտեցին և ավերեցին այն: Հետագայում, ամ-  
փոփելով թաթարական արշավանքի արդյունքները, տարեկիրը  
սոսկումով անել եւ, թե այսուղ, վորտեղից անցել եւ Բատուն,  
անդամ խոտ չեր կանաչում: «Թյազանի պատմապրույցը Բա-  
տուի արշավանքի մասին»—ի հեղինակը խոսում է ոյազանցիների  
տոկունության և քաջության մասին. «Թյազանի քաջերն ու խի-  
զախներն այսպես արիաբար եյին կովում, վոր անդամ նրանց  
վոտքի տակի հովը անքում եր, իսկ Բատուի զնուերն իրարանց-  
ման մեջ ընկան»: Սակայն թաթարական հրոսակախմբերի քանու-  
կական գերակշությունն այնքան մեծ եր, վոր ոյազանցիների  
քաջությունը և հերոսությունը չոփնեց նրանց և նրանք, ասում ե  
պատմվածքը, «բոլորը հավասար ընկնում եյին և խմում մահ-  
վան միասնական ընդհանուր բաժակը, այսուղ բոլորը միասին  
ընկան»:

Ռյազանից թաթարները զնացին Սուլլալի յերկիրը: Սուլ-  
լալի զորքը վարդիմիրի մեծ իշխանի վարդի Վանկուող Յուրյեկիչի  
գլխավորությումը՝ թաթարներին հանդիպեց Կորմայի մոտ:  
Նրանունակը, գայտան մարտը վերջացավ թաթարների Հաղթանա-  
կով,—Սուլլալի զորքերը ջարդվեցին և ցրիվ յեկան: Վանկուողը  
փոքք չոկառով փախավ Վարդիմիրը: Թաթարները շարժվելով նրա  
հետքերով, ճանապարհին դրավեցին և ավերեցին Մասկան: Վա-  
րդիմիրի մեծ իշխան Յուրյի Վանկուողովիչին՝ այն ժամանակ զոր-  
քով աեզափորվել եր Սիտ գետի ափին: Փետրվարի սկզբին պա-  
շարկելով Վարդիմիրը, թաթարները զրա հետ միասին վերցըին  
ուռասական հին քաղաք Սուլլալը: Փետրվարի 7-ին նույն բախ-  
տին արժանացավ նաև Վարդիմիրը:

Փետրվարի ընթացքում Վարդիմիր-Սուլլալի յերկրի բոլոր  
քաղաքները թաթարները զրավեցին և ամայացրին: Սուլլալի  
իշխանությունն ամրողավեցին անցավ նրանց ձեռքը:

Մարտի 4-ին Սիտ գետի վրա մարտ տեղի ունեցավ թաթար-  
ների և Յուրյի Վանկուողովիչի զորքի միջև: Այլ մարտի ժամա-  
նակ Յուրյի Վանկուողովիչին սպանվեց, նրա զորքը ջախջախվեց:  
Վոչչացներով Սուլլալի իշխանության ուզմական վերջին ուժե-  
րը՝ թաթարները մեկնեցին վեպի Նովգորոդ, բայց զարնանային  
հեղեղների ուստածառով չհասան այսուղ և զարձան դեպի հա-  
րավարեելը, տափաստան գուրս դալու մատղբությամբ:

Ճանապարհին, Կողելսկ փոքրիկ քաղաքի բնակիչները հերո-  
սական դիմոդրություն եյին ցույց սպալիս թաթարներին, վորոնք  
ստիպված յեզան յոթ շարաթ սպասել: Անզամ յերբ քաղաքի պա-  
րիսպները քանդվեցին և թաթարները մասսայորեն խուժեցին քա-  
ղաքը, Կողելսկի բնակիչները չարունակում եյին դիմադրությու-  
նը և թաթարների հետ կռվում եյին ձեռնամարտով: Չնայած  
թաթարներն ընտելացել եյին ուռասական զորքերի քաջությանն ու  
հերոսությանը, այնուամենայնիվ նբանք գարմացել եյին կողել-  
ցիների անձնուրաց խիզախության վրա և, ինչպես ասում եւ տա-  
րեկիրը, Կողելսկը միշտ կռչում եյին «չար քաղաք»:

1239 թ. թաթարները տիրացան Գերեյասաւավլին և Զերնիկո-  
վին: 1240 թ. վերջին նրանք ըրջապատեցին Կիեր, ինչպես ասում  
եւ տարեկիրը, «նրանց ուժը մեր ուժից շատ եր... և ձայնե-  
րը չելին լավում սայլերի ճոճոցի, բազմաթիվ ուղարկի մորն-  
չյունի, ձեկերի խրմնջոցի և անհամար մարդկանց ճիշերի օրա-  
ծառով»:

Կիեցիներն իրենց հայրենի քաղաքը պաշտպանում եյին նույն-  
ովիսի համառությամբ ու հերոսությամբ, ինչպես և անոնահալի  
փառքի արժանացան Կողելսկի բնակիչները: Թաթարները հարձա-  
կումն սկսեցին քաղաքի հարավային մասից, Լազդի զարպաների  
մոտ: Նրանց կողմից դրված պաշարողական մեքնաները վիշեր-  
ցերեկ անլող հատ հարվածում եյին պարիսպներին: Վերջապես  
յերեկ պատերի մեջ ձեղքեր զոյցըին և թաթարները խուժեցին  
քաղաքը, կիեցիները նահանջեցին քաղաքի ներսը և արագորեն  
ամրություներ կառուցելով Դեսյատինյան յեկեղեցու մոտ՝ այս-  
տեղ նորից սկսեցին կովել: Նկարագրելով այլ կատաղի մարտը՝  
տարեկիրն ասում եւ. «Սյատեղ պետք եր տեսնել նիզակների ճար-  
ճառությունը, վահաների զզրդյունը, լույսը խավարեցնող նետերը»:

Սակայն կիեվցիների կատաղի գիմադրությունն ընկճվեց և՝  
ուռասկան հնագույն մայրաքաղաքն ընկավ։ Բոլոր մյուս քա-  
ղաքների նման Կիեն ել ջախջախվեց։ Նրա բնակիչների մի մասը  
կոտորեցին, մի մասը դերի տարան, սարուկ գարձրին։ Կիենի ամ-  
բողջ յերկիրը կողովանեցին, ավելիցին և ամայացրին։ Վեց տա-  
րի դրանից հետո Վուկի Հորդա յեկած իտալացի Պլանո Կարպի-  
նին Կիենի յերկրով անցնելիութիւնը ամբողջ ճանապարհին տեսավ  
միայն ավերակների կույտեր և անհամար մարդկացին վրակրներ  
և զանդեր։

Կիենի յերկիրը քայլայելուց հետո թաթարներն անցան Վո-  
լինի և Գալիչի յերկրները։ Այդ հարուստ, ծաղկող յերկրի  
բարոր քաղաքներն ու գյուղերը մոխրի վերածվեցին։ Սպանված-  
ների թիվն այնքան շատ եր, վոր իշխան Դանիլ Գալիցիին, թա-  
թարների հետանալուց հետո Հունդարիայից իր յերկիրը վերա-  
դառնալիս, տարեկրի խոսքերով՝ «սպանվածների թիվն այնքան  
շատ եր, վոր գյուղացիները չեյին կարողանում դաշտ դնալ, Վո-  
լոդիմիրում (Վոլինսկում) վոչ վոք կենդանի չժնաց, սուրբ տառ-  
վածածնի յեկեղեցին լիքն եր պիտիներով, մյուս յեկեղեցիները  
լիփ-լիցուն եյին դիակներով»։

Կիենի և Վոլինի-Գալիչի իշխանությունների ավերումով  
և ամայացումով փաստորեն վերջացավ սուսական յերկրների  
նվաճումը թաթարների ձեռքով։

1241 թ. գարնանը թաթարական հրոսակախմբերն անցան  
Հունդարիա, վորից հետո ամայացրին Սիեզիան և Մորավիան։  
Զիսիայում նրանք նշանակալից հականաբաժն ստացան և ավա-  
րով ծանրաբեռնված՝ Հունդարիայով, վալախիայով և Մորգա-  
վիայով մոտեցան ներքին Վոլգային, վորանդ բնակություն հաս-  
տատեցին և հիմնեցին մի նոր մեծ պետություն—Վուկի Հորդան,  
վոր նշանակում և գոսկի վրան, կառ վոսկի ցեղ։

Վուկի Հորդայի մայրաքաղաքը գարձավ քոչվորների նախկին  
կայսությունը Սարայը, վորը շրտում գարձավ քաղաքամասը և հարուստ  
քաղաքը։ Սարայը գտնվում էր Վոլգայի հետեւ, մոտավորապես  
այնուղիւն, վորանդ հիմա զանգում և Ստալինգրադը։

Վուկի Հորդայի վրաված հոկայական տերիտորիան իր մեջ  
ընդգրկում էր Դիլիսը, Կովկասը մինչև Բակու քաղաքը, Խորեգ-  
մը (հետագայում—Խիվոյի թաղափորությունը։ Հիմա մտնում ե  
Ռուբեկստանի և Թուրքմենստանի կազմի մեջ)։ Արևուտքում  
Վուկի Հորդայի տիրապետությունն անցնում էր Դնեստրից մինչև  
Դանուր, արևելքում տարածվում էր մինչև Արևմտյան Սիրիու,

Հյուսիս-արևելքում ընդգրկում էր Վոլգայի միջին հոսանքը և  
Կամայի բուլգարների ամբողջ մարզը։

Թաթարական հրոսակախմբերի հետ ունեցած առաջին իոկ  
հանդիպման ժամանակ սուսական զորքերը կատաղի կոմի բռնը-  
մեցին նըանց հետ։ Մուսական ժողովուրդը հերոսաբար պաշտ-  
պանում էր իր ազատությունը, սակայն բաժանված լինելով շըր-  
ված և իրարից առանձնացած իշխանությունների, նա ի վիճակի  
չեր դիմանալու ուժեղ, խիզախ, այն ժամանակ տեխնիկապես լավ  
ապառագինված թաթարական բանակին։ Մուսական հողերի Փեռ-  
դարական մասնատվածությունը թաթարական նվաճողների հաղ-  
թանակի հիմնական պատճառն եր։ Մուսական առանձին բանակ-  
ները, ընդհարվելով լավ զինված և կազմակերպված, քանակապես  
չի քանի անգամ գերազանցող հակառակորդի հետ, չնայած իրենց  
հերոսությանը, անխուսափելիորեն պետք ե պարտվելին։

Այսպես նվաճվեցին սուսական յերկրները։ Թաթարները  
դրանց հոչակեցին վորպես Վոսկե Հորդայի «ուլուս», Հպատակ  
գովառները։ Սկսվեցին թաթարական լծի մոայլ ժամանակները  
թուսաստանում։ Մուսական ժողովուրդը քաղաքական կախման  
մեջ ընկալ ոտարերկրյա նվաճողներից։ Թաթարական խաները  
սիստեմատիկորեն ծծում եյին Մուսակայի ժողովրդական տնտեսու-  
թյան կենսական բոլոր հյութերը։

## ԹԱԹԱՐԱԿԱՆ ԼՈՒԾԸ

Դ Թաթարական լուծը շարունակվեց յերկու հարյուր տարուց  
ավելի։ Այդ լուծը «վոչ միայն ճնշում, այլև վիրավորում և  
հյութաբամ եր անում զոհ գարձած ժողովրդի հոգին», —ասում  
ե Մարքու «XIII զարի զալտնի գիպլումատիան» Հողվածում։

Անմիջապես չխառնվելով ստրկացված յերկրի ներքին կյան-  
քին և անգամ փորձ չանելով փոխելու նրա հասարական-քաղա-  
քական կացութաձևը, թաթարական նվաճողները սուսական իշ-  
խաններին թողին կառավարման զլուխ՝ նրանցից պահանջելով  
հնագանդություն և տուրք։ Վախեցած թաթարների ջարգերից՝  
ուսւ իշխանները չեյին համարձակում մտածել ինանի կամքին  
դիմադրելու մասին։ Նրանք մեկը մյուսի հետեւ ստիպված  
եյին մեկնել խանի կայանը հրամանադիր (պիտակ) ստանալու  
համար—խանի արտօնագիրն իշխանության իրավունքի մասին։  
Վուկի Հորդայի մայրաքաղաքն առաջինը մեկնեց Վլադիմիրի իշ-  
խան Յարոսլավ Վասիլովովիչը, Սիտի մարտում սպանված իշ-

խան Յուրի Վահվոլոգովիչի յեղբայրը։ Արտասահմանի և մեր տարեդիրների վկայությամբ, Բատուն նրան մեծ պատվով ընդունեց և նրան մեծ իշխանության հրամանագիր տվեց։ Զկարողացավ խուսափել այդ ժանր անհրաժեշտությունից նաև շվեդներին և լվովնյան առաքեաներին հաղթող Ալեքսանդր Նեվսկին, ինչպես նաև գերմանացիների, հունգարացիների և լեհների գեմարած իր հաղթանակներով հպարտ իշխան Դանիլ Գալիցիկին և մյուս բոլոր իշխանները։

Թաթարական իշխանները բնակչության վրա ծանր տուրք դրին։ Տուրքերը և պարհակներն այնքան շատ եյին, վոր առանց այն ել քայլայված բնակչությունը կատարելով այն՝ հազիվ-հազ կարողանում եր կերակրվել։ Իրենց տիրապետության սկզբին թաթարները հարկերի գանձումն իրենք եյին կատարում։ Հարկերի գանձումն ապահովելու համար Վոսկե Հորդայի հանձնարարությամբ մարդահամար անցկացվեց։ Տարեդրությունները հայտնում են, վոր 1257 թ. այդպիսի ցուցակագրում անցկացնելու համար Վոսկե Հորդայից ուղարկված եյին հատուկ ցուցակգրողներ, վորոնք և կազմում եյին փճարողների ցուցակները։ Տուրքը հավաքում եյին խանի հատուկ աստիճանավորները—հարկահանները (బասկակ), վորոնք ամբողջ յերկրում իրենց տրամադրության տակ ունեցին զինված զոկատներ։ Ամենավոքը դիմադրությունն իսկ հարկահաններին—պատժվում եր մահապատժով։ Բացի գլխավոր տուրքից՝ «յասիկ»-ից (յեկամուտի մեկ տասերորդը), թաթարները տարեր արհեստագործությունների վրա հարկեր եյին սահմանել, հատուկ հարկ—«տամդու», վոր հավաքում եյին չուկաններում առուծախի ժամանակ, և մաքսահարկ՝ ճանապարհներով և կամուրջներով անցնելու համար։ Բոլոր տուրքերը միասին կոչվում եյին «Հորդայական յելք»։ Խանի բոլոր աստիճանավորները՝ հարկահանները, գրանցողները, հարկահավաքները, մաքսատուրք դանձողները և լնդհանրապես բոլորը, ովքեր յեկել եյին Վոսկե Հորդայից, ապրում եյին ժողովրդի հաշվին։ Թիշտիխների այդ ամբողջ բանակը, ոգտվելով բնակչության անպաշտպան վիճակից և իրենց անսահմանափակ իրավունքներից, բացի սահմանված տուրքը գանձելուց, ժողովրդին կողոպտում եյին իրենց անձնական շահի համար, իսկ բոլորը դեպքում դժգոհներին գերի եյին տանում և վաճառում՝ ստրուկ դարձնելու համար։

Բացի դրամական տուրքից, բնակչությունը պարտավոր եր մի շարք պարհակներ տալ բնամթերքով։ Այդ պարհակների թվին



պատկանում եր՝ ճանապարհային պարհակը, այսինքն թաթարական ճանապարհորդ աստիճանավորներին փոխազդական միջոցներ տրամադրելու պարտավորությունը։ Վոսկե Հորդայի հետ կապը բարելավելու համար, թաթարներն ամբողջ յերկում կազմակերպեցին փոստային կայաններ—փոստավարներ (այսուղից՝ փոստավար, փոստապարհակ)։ Այդ փոստավարներին պահպաննելու և սպասարկելու ամբողջ ծախսը դրված եր տեղական բնակչության վրա։ Բացի բարձաթիվ պարհակներից, վոր բնակչությունը քայլայլելու վախից հարկադրաբար անխօս կատարում եր, կար ի միջի այլոց նաև խանի ծառայողներին վորսի ժամանակ ողնելու պարտավորությունը, վորի համաձայն ամեն ժամանակ կարող ելին ամբողջ գյուղեր գուրս բերվել շուրջկալի։ Բացի դրամական տուրքից, հարկից, մաքսային գանձումներից և բնապարհակից՝ Վոսկե Հորդան պահանջում եր իրեն ոժանդակ զորքեր տրամադրել։

Թաթարական արշավանքի և կողովուտի հետևանքով բոլորովին քայլայլած ժողովրդական մասսաների վիճակն անտանելի յեր։ Ուժից վեր հարկերի և խանի պաշտոնյանների բոնությունների հետևանքով հուսահատության և կատաղության հասած ժողովուրդը շատ անդամ և առատամբել, գուրս և վոնդել և սպանել առավել սանձարձակ հարկահաններին և գանձողներին։ Տարեդրի հազորդման համաձայն, թաթարների դեմ ժողովրդական գայլույթին առաջին անդամ բացահայտ յերկաց՝ 1259 թ., կապված նովորոդի բնակչությանը ցուցակադրելու՝ թաթարական իշխանությունների պահանջի հետ։ Նովորոդի բնակչության մեծամասնությունն այնքան թշնամաբար դիմավորեց խանի ցուցակադրողներին և հարկահաններին, վոր վերջիններս վախենալով իրենց կյանքից՝ պահապաններ պահանջեցին։ Սպանալիքով և համոզելով՝ Նովորոդի բոյաները վերջիններջո ստիպեցին բնակչությանը յենթարկվել խանի հրամանագրին։ Հետագայում ժողովրդական այդպիսի հուզումներ տեղի ունեցան նաև Յարոսլավլում, Մուզլալում, Ռոստովում։ Մոտ 1262 թ. այդ ալեկոծումների մասին տրված հաղորդագրության մեջ տարեկիրն առում ե.

«... աստված, փրկի'ր Ռոստովի յերկրի մարդկանց բասուրմենների կատաղի տանջանքից, զայրույթ ներշնչեր գյուղացիների սրտին, վորոնք չեն հանդուրժում դարշելինների բոնությունը, թույլ տուր վեչելին քշելու նրանց քաղաքներից, Ռոստովից, Մուզլալից, Յարոսլավլից ...»։

Հիշողությունը հարկահանների անկարգնավթյունների և թա-  
լանների մասին՝ յերկար ժամանակ պահպանվել եր ժողովրդա-  
կան յերգերում և ասություններում։ Այդ տիտուր հիշողությունը  
առանձնապես վառ և գուներ արտացոլվեց Դուդենայելիչ Շչելիկա-  
նի մասին յեղած յերգի մեջ, վորի հիմքը պատմական փասոն և  
կազմում։

Այդ յերգում Շչելիկանը պատկերված է վորպես անսահման-  
զախան մի մարդ, վորը ընկունեակ և ամեն չարտպործության։  
Ազգյակ խանը, ցանկանալով փորձել հարկահան լինելու նրա պի-  
տանիությունը, նրան առաջարկում է մորթել եր տղային և խմել  
նրա արյունը։ Շչելիկանը, առանց տատանմիլու, կատարում է այդ  
պահանջը և դրանից հետո մեկնում է Տվեր՝ վորպես հարկահան։  
Այստեղ նա վոչ վորի չի խնայում։

Նա, Շչելիկանը վերցնում էր պահեստներ,  
Զվճարված հարկերը,  
Զվճարված թաղողորական տուրքերը...

Ով փառ չուներ,  
Նրա վորդին եր տանում,  
Ով փորդի չուներ,  
Նրա կենն եր տանում,  
Ով կին չուներ,  
Նրան իրեն եր տանում։

Նաև դեպքում տուրքի զանձումը տալիս ելին կապալով։  
Կապալառուները մեծ մասամբ արեւելյան առեւտրականներ ելին։  
Կապալառուական այդ սիստեմն ավելի վատ եր ժողովրդի հա-  
մար։ Ռուս իշխանները շատ շուտով աշխատեցին, վոր տուրքի  
համարման բացառիկ իրավունքն իրենց տրիք։ Վոսկեհորդայտ-  
կան կապալարիչները բացարարեցին ռուս իշխանների այդ ձեզ-  
տումը, զեկավարվելով նրանով, վոր իշխանները իրենց ոդքին  
ընտէլությունից զանազան հարկեր ելին հալաքում—հետևապես  
հարկային զործը վաղուց և լավ հայտնի յեր նրանց։ Ամենայն  
հավանականությամբ տուրքի գանձումը ռուս իշխաններին հանձ-  
նելու՝ վնակե զորդայի վորոշման վրա արդող պատճաներից և  
հանդիսացել ժողովրդական ապատամբությունները հարկահաննե-  
րի և կապալառուների զեմ։ «Յասիկ»-ի (հարկի) գանձման  
իրավունքը ռուս իշխաններին տնօնելու հետևանքով՝ հարկա-  
հանները XIII դարի վերջում բոլորովին անհետացան։

Թուսական իշխաններին հանձնելով հպատակ յերկրի կառա-  
վարությունը՝ թաթարական իշխովները մեծապես ոգտագործում  
ելին նրանց միջի զգագարող ֆեոդալական պայքարը։ Սովորա-  
բար պաշտպաններով ավելի հարուստ իշխաններին, այսինքն այն-  
պիսիներին, փորոնք լուղ կարող ելին ապահովել տուրքի գան-  
ձումը և մուծումը, զբա հետ ժեկտեղ նրանք առիթը չելին բաց  
թողնում տուրքի շախն ավելացնելու կամ լլացուցիչ մուծումներ  
պահանջներու։ Իշխանության հրամանալու համար մզլող պայ-  
քարին ընթացակցում ելին խանին, նրա կանանց և նրանց մոտիկ  
ու բոլոր ազգեցիկ մարդկանց հատկացված շոայի նվերները։  
Ավագության նախկին իրավունքը բոլորովին կորցրել եր հրա-  
մակացթյունը։ Ով շատ էր վճարում կամ առատ եր նվերներ տա-  
լու գործում, նա անկախ փորեկ ավագությունից, համապատա-  
հան իշխանության հրամանալու եր ստանում։

Հաշվի ամենիով յեկեղեցու քաղաքական մեծ գերը, նվաճող-  
ներն իրենց տիրապետության հաստատման առաջին իսկ որից  
ձղտեցին բարի հարաբերություններ հաստատել նրա հետ և պետք  
է ասել, վոր նրանց այդ լլովին հաջողվեց։ Հագեռքականության  
համականքը շահելու համար ինաները նրան ազատել ելին բո-  
լոր տեսակի հարկերից և պարհակներից։ Հոգեոր կոչման մար-  
դիկ, յեկեղեցին և վանքը և նրանց ամրող գույքն ազատ ելին  
ամեն տեսակի զբանցումից և ցուցակագրումից։ Յերախտական  
հոգեորականությունն այդ արտօնությունների գիմաց աղոթք-  
ներով եր վճարում խանին ժամերգության ընթացքում, գովա-  
րանում եր նվաճողների իշխանությունը, նրանց բոլոր որենքները  
և կարգագրությունները, այդ թվում նաև իշխանների կողմէց  
ընակչության վրա դրված բոլոր հարկերն ու պարհակները։

Այսպիսով թաթարների արցավանքը և յերկու հարյուր տա-  
րուց ավելի տեսող թաթարական լծի շրջանը, թաթարական ան-  
պատակությունները, նրանց կատարած ավելումները, խանի աս-  
տիճանավորների գրած՝ ուժից վեր ապօռինի տուրքերը, պահ-  
մանված հարկերի վճարումը—այս բոլորը յերկար ժամանակով  
արդեւակ ելին սուսական յերկրի տնտեսական և կուլտուրական  
զարգացմանը։ Սակայն իր վրա կրելով մոնղոլական հրոսակա-  
խմբերի հարգածները, ուսու ժողովուրդը ավելումից փրկեց  
ամրող Արևմտյան Յելլուպան։ «Ժամանակադրական քաղաքածք-  
ներ»-ում Մարքսն այդ նշում գ վորպես համաշխարհյան-պատ-  
մական նշանակություն ունեցող փաստ։

ՄՐԱԿՈՎՅԱՆ ՌՈՒՍԻԱՆ ԽIV ԴԱՐԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ  
ՅԵՎ ՎՈՍԿԵ ՀՈՐԴԱՆ

Կոչոր Փեղալների պայքարն իրար դեմ և նրանց պայքարը ավելի թույլ, իրենցից կախված Փեղալների դեմ՝ չարումակ- վում եր նաև Վոոկե Հորդայի տիրապետությունը հաստատվե- լուց հետո, սակայն հիմա նա մի քիչ այլ բնույթ եր ստացել: Վորովչետե իշխանները լիակատար կախման մեջ եյին, խանա- կան իշխանությունից և խանի ձեռքից եյին իշխանության հրա- ժանադիր ստանում, ուստի նրանք ստիպված եյին իրենց վեճե- րը լուծել վոչ այնքան զենքով, վորքան խանի արքունիքում մե- քենայություններ անելու միջոցով: և կաշոռք տալով: Թաղմա- կան ընդհարումները, հարկավ, շարունակվում եյին: Հաճախ գրանք տեղի եյին ունենում վոոկե Հորդայի՝ նրանց մի կողմին տրամադրված զորքի ստանդակությամբ, սակայն վերջին հաշվով պայքարի յեւը կախված եր թաթարական խանից: Ֆեղալական պայքարի այս նոր պայքաններում շատ արագ սկսեց ամրա- պնդվել, լայնանալ և առաջնակարգ դեր խաղաչ առաջներում ան- նշան, քիչ աչքի ընկնող Մոսկովյան իշխանությունը: Այդ իշխա- նությունը աշխարհագրական չափաղանց բարենպաստ դիրք ու- ներ: Մոսկա գետը թափվելով Ռիան՝ ջրային ճանապարհով կա- պում եր Մոսկովյան իշխանությունը նովդորոշի հետ: Մի շարք այլ գետեր—Կլյազմա, Ուչա, Յառուղա և այլն—Հաղորդակցու- թյան հարմար միջոց եյին հանդիսանում իշխանության ներսում: Այս բոլորը նպաստում եյին առևտորի զարգացմանը և ոժանդա- կում Մոսկվայի յերկրում բնակություն հաստատելուն: Թեպետ և թաթարներն ավերեցին Մոսկվան, այնուամենայնիվ Մոսկվայի իշխանությունը թաթարական հրոսակախմբերի շարժման ճանա- պարհից զուրս և Ռուսաստանի կենտրոնում գտնվելու պատճ- ռով թաթարական արշավանքից զգալիորեն ավելի քիչ տուժեց և ավելի քիչ յենթարկվեց թաթարական ասպատակություններին, քան ոռոսական Հարավ-արեելյան իշխանությունները: Այս իսկ պատճառով Մոսկվայի իշխանությունը նրանցից ավելի արագ զարգացավ, աճեց և դարձավ Ռուսայի Փեղալական խոշոր իշ- խանություններից մեկը: Դեպի Մոսկվայի իշխանության տերե- րիան եյին ձգտում շատ վերաբնակվողներ: Փոկվելով Զար- դից՝ այսուղ եյին ձգտում Վորքայի շրջանի բնակիչները, ոսու- գալցիները, ոյազանցիները, ոսուովցիները և բոլոր նրանք, ոտ- քեր անվանդություն եյին վնասուում: Դրա հետևանքով առա-

ջացած՝ բնակչության արագ աճն իր հերթին ուժեղացնում եր յերկրի անտեսական վերելքը: Իսկ այս ամենը տանում եր դեպի Մոսկվայի իշխանների յեկամուտի ավելացումը:

Ոգտվելով աճող ուժից և հարստությունից, Մոսկվայի իշ- խանները զանազան միջոցներով ավելացնում եյին իրանց տիրա- պետությունը: Վորտեղ կարելի յեր հողը գնել, գնում եյին, վորտեղ կարելի յեր անպատճի կերպով խել—խում եյին: Մոս- կվայի առաջնի իշխան Դանիլ Ալեքսանդրովիչը (1283—1303թ.), Ալեքսանդր Նեվսկու վորդին, Ռյազանի իշխաններից խելց Կո- լոման և միացրեց Մոսկվայի յերկրին: Բացի այդ՝ նա ժոռան- գարար ստացավ Գերեյսուլավլը: Նրա վորդի և հաջորդ Յուրի Դանիլովիչը (1303—1328թ.) Մոսկվային միացրեց առաջնիրում Մմոլենսկի իշխանությանը պատկանող Մուժայիկ քաղաքը:

Այսպիսով՝ անկախ այն շարժառիթներից, վորոնցով նրանք զեկավարվում եյին, գեռես Մոսկվայի առաջնին իշխանները պայ- քար սկսեցին Փեղալական մասնաւալածության դեմ, այսինքն՝ սկսեցին լայնացնել Մոսկվայի իշխանությունը ի հաշիվ առանձ- նացած և հյուծված հարկան իշխանությունների: Ռուսական հո- գերն իմի հավաքելը Մոսկվայի հետագա բոլոր իշխանների քա- զաքականության հյությունը դարձավ:

Պայքարը Փեղալական մասնաւալածության դեմ, վոր պատ- ճականորին առաջադեմ յերեռույթ եր, միաժամանակ զարձակ Մոսկվայի անտեսական և քաղաքական ամրացման և աճման հիմ- նական պատճառներից մեկը:

Այդ ժամանակ Մոսկվայի իշխանների ձեռքին արգեն կու- տակվել եր հարստություն, վոր նրանց հնարավորություն եր տայիս մրցակցել Տվերի իշխանների հետ և ձգտել Վոսկե Հորդա- յամ մեծ իշխանության հրամանադիր ստանալու: Մկրում այդ պայքարի հետեանքները պարզ չեյին, անդամ թվում եր, վոր այլուրությունից հաղթող դուրս կդա Տվերը: Տերկու ախոյան- ներն եւ—Տվերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը և Մոսկվայի իշխան Յուրի Դանիլովիչը մահից հետո (1303թ.) համարյա միա- ժամանակ մեկնեցին Վոսկե Հորդան: Զին սովորության համա- ձայն, մեծ իշխանի իրավունքը պետք ե անցներ Տվերի իշխանին, վորպես տոհմի ավագի, բայց դրա վրա վոչ վոք արդեն ուշա- դրություն չեր դարձնում: Յերբ Յուրի Դանիլովիչը հասավ Հորդա, խանի մոտիկները նրա առջև հարց դրին՝ «յեթե իշխան Միխայիլից շատ յելք (տուրք) տաս, ապա մենք քեզ մեծ

իշխանությունը»։ Ակսվեց առևտուրը։ Յուրի Դանիլովիչը Միհայիլ Տվերոկուց չատ տվեց, սա իր Հերթին դարձյալ ավելացրեց։ Սակայն Յուրին հեռում չզնաց և այդ յուրահատուկ աճուրդը վերջացավ Տվերի Հաղթանակով—մեծ իշխանի հրամանադրին սուացավ Միհայիլ Ալեքսանդրովիչը։ Սակայն Տվերի իշխանի Հաղթանակը տեսական չեղագ։ Մոփպած լինելով յենթարկվել իշխանի կամքին, Յուրի Դանիլովիչը կրկնապատկված յեռանդով ուժեր եր հավաքում հետաքա պայքարի համար։ Տվերում այդ շաբանի յեր, և Միհայիլ Ալեքսանդրովիչը, չցանկանալով թույլ տալ Մոսկվայի ուժեղացումը, միքանի անդամ դիորձեց այն ուժով դրամիւ, մոսկովցիների հետ ճակատամարտեց քաղաքի պարհապնդրի տակ, սակայն ի վիճակի չեղագ/Հաղթելու։

Յուրի Դանիլովիչը շարունակում եր համարությամբ և համբերատար կերպով կենացործել եր լայնորեն մտածված պլանի։ Առաջիկա վճռաւկան բաղման ժամանակ Հաջոռությունն ապահովելու համար նա մեկնեց Հորդա, յերկար ապրեց տյուտեղ և ամուսացավ խան Կոնչակի քրոջ հետ։ Բավականաչափ ուժեր կուտակելով և հավատացած լինելով աներոջ ուժանդրակությանը՝ նա մեծ զորքով ներխուժեց Տվերի իշխանությունը և նրա գույքի մասն ավերեց, սակայն հետո պարությունն կրեց և սոխպած յեղագ հաշտություն ինդրել Միհայիլ Ալեքսանդրովիչից։ Խաղամական գործողությունները զագարեցին, սակայն պայքարը դրանց միջն շարունակվում եր։ Խանի արքունիքում բանսարկություններ անելու միջոցով Յուրի Դանիլովիչը անվանադրեց իր ախտանին և Միհայիլ Ալեքսանդրովիչին Վոսկե Հորդա բերել տվեց, վորտեղ ի վերջո խանի հրամանով Միհայիլ Ալեքսանդրովիչին մահապատճի յենթարկեցին։ Մի փորոշ ժամանակոց հետո Յուրի Դանիլովիչը ինքը սպանեց Միհայիլ Ալեքսանդրովիչի տղա Դիմիտրի Միհայլովիչի կողմից։ Մեծ իշխանությունն անցավ Տվերի իշխան Միհայլովիչի մյուս փորուն—Ալեքսանդրին։

Տվերը նորից հաղթանակողն եր, սակայն այս հաղթանակն ել կարծատե, յեղագ։ Յուրիի յեղբայր իվան Դանիլովիչը, մեծապես ուղարկործելով իր հարստությունը՝ խանին մոտ կանոնած աստիճանավորներին կաշառելու համար, 1328 թ. մեծ իշխանության հրամանագիր ստոցագ։ Այդ ժամանակից սկսած Մոսկվայի իշխանները ամուր պահում ելին իշխան ձեռքում այդ հրամանագիրը և հետևողականորեն տարիող քաղաքականությամբ կարու։

զայան Վոսկե Հորդայի ակտիվ պաշտպանությունը ձեռք բերել։ Բնութագրելով Մոսկվայի սուաջին իշխանների գործունեցությունը, Մարքսը «18-րդ դարի զաղունի գեղալումատիան» հոդվածում ասում է, վոր «Մոսկվայի իշխաններ—Յուրի Դանիլովիչը», հատկապես նրա յեղբայր Իվանը (1328—1341 թ.), Վորին կոչում ելին Կալիտա (դրամակարկ), կեղծավորություն անելով խանի մոտ, նրա մոտական աշխատակիցներին և խանին կաշառելով, հասագ այն բանին, վոր խանն սկսեց պաշտպանել Մոսկվայի իշխանությանը»։

Աչալը ջորին կշանադատելով ուժերի հարաբերակցությունը և համկանալով, վոր մուանց Վոսկե Հորդայի ոժանդակության ինքը չի կարող հաշվիհարդար կատարել ախոյանների հետ, իվան Կալիտան բոլոր միջոցներով աշխատում եր արժանանալ խանի վասահությանը։ Վոսկե Հորդայի ոժանդակությունը և վատահությունը հատկապես աճեց Տվերում թաթարական աստիճանավորների դեմ տեղի ունեցած ժողովրդական ապատամբությունից և խանի լիազոր Զոլ-խանի սպասությունից հետո, վորը ժողովրդական յերգի մեջ հայտնի յի Շենիկան մետնով։ Թաթարական հիսունականությունը բանակի գլուխ անցած, վոր միացավ Մոսկվայի գնդերի հետ, իվան Կալիտան խանի համանարարությամբ խուժեց Տվերի իշխանությունը և այնպես ավերեց, վոր գրանից հետո Տվերի իշխանները, տարեդրի թաթարակի արտահյատությամբ, «նստած Այբն Տվերում ծայրահեղ աղքատության ու ընչաղրկության մեջ վորովհետեւ Տվերի ամբողջ յերկիրը դատարկ եր»։

Դ Հնազանդությումը կատարելով Վոսկե Հորդայի կամքը, իվան Կալիտան միաժամանակ կարողանում եր նրան իրեն հարկավոր ուղղությունը տալ։ Նրա բարդ և մինչև վերջին մանրամատնությունը մշակած քաղաքականությունն այն եր, վոր խանին գործնի «...Հու զենք իր ձեռքին, վորի միջոցով ինչն ազատվի իր վտանգավոր ախտյաններից և հաղթահարի իշխանության գրավման հաղթական ճանապարհին յեղած ամեն դժվարություն» (Մարք)։

Վոսկե Հորդային իշխանությունը իշխանություններից տուրք հավաքելու իրավունք ձեռք բերելով, իվան Կալիտան ստացավ ես մեկ, այս ել ամենահուպալի աղբյուր՝ մեծ հարստություններ կուտակելու համար։ և այս՝ կաստողն նրան յենթարկեց իշխանությունների մեծ մասը։ Միջոցների մշական և մեծ մուտքը հնարավորություն տվեց իվան Կալիտային հողերի, գյուղերի և քաղաքների մասսայական գնում կատարելու։ Մոսկվայի իշխա-

նության հողերը նրա որով նշանակալի չափով ավելացան, տնտեսական ուժը և քաղաքական հզորությունն այնքան աճեց, վոր Մոսկվան սկսեց դառնալ ազգային միավորման կենտրոն։

Մեծ նշանակություն ունեցավ իվան Կալիտայի պահանջով ուստական յեկեղեցու պետ միտրոպոլիտ Պյոտրի փոխադրմիլը Մոսկվա, վոր Մոսկվան դարձրեց ուստական բոլոր յերկրների յեկեղեցական մայրաքաղաքը։ Այդ ժամանակից սկսած՝ Մոսկվայի իշխանությունները և միջոցառումները մյուս բոլոր իշխանությունների բնակիչների աշխում թվում եյին յեկեղեցու բարձրագույն դեկալարի կողմից սրբագործված։

Հոգևորականության բազմաթիվ բանակը, վոր Ծնդդրիկը և ուստական հողերը և յենթակա յեր Մոսկվայի միտրոպոլիտին, յուրահատուկ շարժափոկի դեր եր կատարում՝ կապելով Մոսկվան ամենահեռավոր անկյունների հետ և ներշնչելով այն միտքը Մոսկվայի մասին, թե նա համաժողովրդական նշանակություն ունեցող կենտրոն է։ Լինելով կենտրոնացված կազմակերպություն՝ յեկեղեցին ինքն եր շահագրդության վերացումով, ուստի և նա դարձավ Մոսկվայի իշխանների ակտիվ ուժականը նրանց վարած հավաքագրման քաղաքականության գործում։

Մոսկվայի իշխանների քաղաքականության հաջողություններին զգալիորեն նալաստում եյին չդադարող ֆեոդալական զգացությունները հարեւան իշխանություններում, վորոնց բնակչությունը ձգտելով ազատվել անխուսափելի քայլայումից՝ անընդհատ վերաբռնակվում եր Մոսկվայի յերկրում։

Մեծ իշխանի կենտրոնական իշխանությունն արդեն ի վիճակի յեր ալպահովելու բնակչության համեմատական անվտանգությունն ու ներքին կարգը։

Վորքան ավելի յեր ուժեղանում Մոսկվայի իշխանությունը, այնքան ավելի եյին գեպի Մոսկվա ձգտում վոչ միայն աշխատավոր խավերը, այլ և մանր ու միջին ֆեոդալները—բոյարները և իշխանները։ Այսպիս, որինակ, Նիժնի-Նովգորոդի բոյարները Մոսկվայի իշխանի մոտ ծառայության անցան և իրենց հետ բերին Նիժնի-Նովգորոդի ամբողջ բնակչությունը։ Կիեվի հայտնի բոյար Ռոդիսոն Նեստերովիչը 1700 մարդով անցավ իվան Կալիտայի կողմը։

Մանր և միջակ ֆեոդալները Մոսկվայի իշխանների մոտ ծառայության եյին անցնում և վերջիններիս գերիշխանությունը ճանաչում, վորովհետեւ դրանից մի շարք առավելություններ եյին

ձեռք բերում։ Մանելով Մոսկվայի իշխանության մեջ՝ ֆեոդալները զանազան արտօնություններ եյին ստանում և կարիքի դեպքում կարող եյին ոժանդակություն ստանալու հույս ունենալ։ Մոսկվայի իշխանների մոտ ծառայության անցնելուց հետո շահագրգությած լինելով նրանց իշխանության ամրապնդմամբ և ուժեղացմամբ՝ յեկվոր այդ իշխանները և բոյարները յեռանդուն կերպով պաշտպանում եյին իրենց տերերի հավաքագրման քաղաքականությունը։

Արտգորդական ուժերի և աշխատանքի հասարակական բաժանման աճման հետ կապված՝ գարգացավ տպրանքաշրջանառությունը և առևտուրը։ Արհեստավորների խոչըր ու մանր առևտուրականների ավելացումով անընդհատ աճում եր քաղաքային բնակչությունը և տարիցտարի ալիւանում եր ուժեղ, կենտրոնացված իշխանության կողմնակիցների թիվը։ Այն արտօնությունները, վորով ողտովում եյին խոչըր ֆեոդալները—իշխանները և բոյարները (առևտուրական մաքսերի զանձումը, հարկերը և այլն), — բեռ եյին քաղաքային բնակչության վրա, ուստի և նա պատրաստակամությամբ միշտ պաշտպանում եր Մոսկվայի իշխաններին՝ տեղական ֆեոդալների դեմ նրանց մզած պայքարում։

Իվան Կալիտայի մահից հետո մեծ իշխանությունն անցավ նախ նրա ավագ տղա Սեմյոն Գորդիին (1341—1353 թ.) (Սեմյոն Գոռող), նրան այդպես եյին անվանել մյուս իշխանների հետ գոռող վերաբերվելու պատճառով, իսկ հետո, յերբ Սեմյոնը մահացալ, իշխանությունն անցավ մյուս տղային՝ Իվան Կրասնուն (1353—1359 թ.)։ Դեռ Սեմյոն Գորդին կրում եր վոչ թե Վլագիմիրի, վոչ թե Մոսկվայի մեծ իշխանի, այլ «ամբողջ Ռուսիան» մեծ իշխանի տիտղոսը։

Իվան Կրասնուն փոխարինեց նրա տղա Դիմիտրի Իվանովիչը (1359—1389 թ.), վորի որով Մոսկվայի իշխանությունն զգալիորեն լայնացրեց իր յերկիրը։

Շարունակելով իր պապիվան Կալիտայի քաղաքականությունը, Դիմիտրի Իվանովիչը, մերթ զնելով, մերթ զրավելով Մոսկվայի իշխանությանը կից ուստական հողերը, սկսեց իրեն յենթարկել նաև այն հողերը, վորտեղ բնակչության վոչ ուստի ժողովուրդներ՝ կոմի-զիրյանները և կոմի-պերմյակները։ Այդ ժողովուրդների մեջ քրիստոնեականը տարածելու համար ուղարկված Ստեֆան յեպիսկոպոսը՝ յեկեղեցական քարոզի հետ միաժամանակ նրանց վրա տարածում եր Մոսկվայի իշխանի տիրապետությունը։

Դիմիտրի Խվանովիչի իշխանության ժամանակ Մոսկվային միացվեցին Վերեյան, Մեշերան, Կալուգան, Դմիտրովը, Վլադիմիրը:

Մոսկվան գարձակ ամենահարուստ քաղաքը: Առևտրի գծով նա մրցում էր Մեծ Նովգորոդի և թաթարների մայրաքաղաք Մարտի Հետ:

Մոսկվայի համար վոչ միայն պաշտպանական, այլև քաղաքական մեծ նշանակություն ունեցավ Մոսկվայի Կրեմլը 1366—1367 թվերին քարե պարսպով պատելը: Այդ փաստը խոսում էր Մոսկվայի իշխանության հզորության անկանությամբ աճման մասին, և մատուցելով այդ, տարեդիրը ստիպրված էր գրելու: «Իշխան Դիմիտրի Խվանովիչը Մոսկվան քարով պատճեց և սկսեց կատարել անդադար. նա բոլոր իշխաններին իր իշխանության ներքո բերեց, իսկ վորոնք չեյին հնագանդվում նրա կտմքին, նրանց դեմ սկսեց վոտնագություններ անել»:

## ԻՇԽԱՆ ԴԻՄԻՏՐԻ ԽՎԱՆՈՎԻՉ ԴՈՆՍԿՈՅ ՅԵՎ ՎԼՈՒԿԵ ՀՈՐԴԱՆ

Յերբ Վոսկե Հորդայի կառավարողները տեսան, վոր իրենց պաշտպանած Մոսկվայի իշխանությունն աճել, մեծ և ուշ է դարձել, լրջորեն անհանդատագան, մանավանդ վոր Մոսկվայի իշխանության տնտեսական, քաղաքական և ուղղական հզորության աճման հետ միասին անընդհատ տեղի յեր ունենում ֆեոդարական մասնատում և այստեղից բղիք՝ Վոսկե Հորդայի թույացումը: Հիմա արդեն խանների կողմէց Մոսկվայի իշխանության փոքր պաշտպանության մասին խոսք լինել չեր կարող: Յեթև անցյալում՝ Մոսկվայի առաջին իշխանների որով, խան Ալեքսեյը, իսկ հետո նրա մորդի Զանիբեկը (Զանիբեկ) բացեիրաց հովանավորում էյին Մոսկվային, ապա այժմ նրանց հաջորդներն աշխատում եյին արգելակել Մոսկվայի հետագա զարգացումը, թուլացնել նրան և զրկել նվաճած: առաջնության դիրքից: Այս նպատակով նրանք Մոսկվայի իշխանների դեմ եյին ճրահրում նրանց միջև:

Մարքսը «18-րդ դարի գաղտնի գիլլոմատիան» հոգվածում նշում է. «Թուլապան իշխաններին ճրահրել իրար զեմ, պահպանել նրանց անհամաձայնությունները, հավասարակշռել նրանց ուժերը և նրանցից վոչ վոքի թույլ չտալ ուժեղանալու—այս բոլորը թաթարների ավանդական քաղաքականությունն էր»:

Սակայն Վոսկե Հորդայի ներքին պայքարը խանական իշխանությունը դարձել էր շատ անկայուն. և նշանակելիորեն ջրատել էր այդ խորածանկ քաղաքականությունը: Բավական է առելու վոր տաս տարվա լնիթացքում Վոսկե Հորդայում տասնհինգ խան փոխվեց, վորոնք ըստ եյության լինչխան տիրապետողներ չեյին, այլ իրար հետ պայքարող ֆեոդարական տարիքը խմբերի ժամանակավոր հոգանակորյաններ էյին: Խանի իշխանությունը կորցրել էր իր նախկին մեծությունը:

Յերբ իշխան Խվան Խվանովիչը (Խվան Կրասնի) մեռավ, Նրա տղա Դիմիտրին ուժ տարեկան էր: Մոսկվայի ախոյաններից մեծի կը Սուզդալի իշխան Դիմիտրը Կոնստանտինովիչը և Վոսկե Հորդայի կառավարողները վորոշեցին, թե յեկել է հարմար ժամանակը Սոսկվային հարված հասցնելու համար: Բորբի Համար միանգամայն անապասելի կերպով նեվրուս խանը մեծ իշխանության հրամանադրը տվեց Սուզդալի իշխան Դիմիտրի Կոնստանտինովիչին, վոր ստանալով հրամանագիրը, խելոյն փոխադրվեց Վլադիմիրը: Սակայն Սուզդալի իշխանի հաղթունակը յերկար չտեսվեց և նրան բարոյական բավարարվածություն միայն մի քանի որ բերեց: Ներփառ խանը Դիմիտրի Կոնստանտինովիչի հետ կապած գործարքից հետո խելոյն և նեթ ուղանվեց Զայայիցկի խան Ալեքսեյի ձեռքով, վորը գենուս չանցած Վոսկե Հորդայի տիրոջ իր զերին՝ արժանացավ իր նախորդի բախտին: Վոսկե Հորդան բաժանմեց յերկու մասի, վորից մեկին կառավարում էր խան Մյուրիքը: Մյուս մասի (անդրբուզյան) խան հոչակից Արշուրը, վորի անունով փառարեն կառավարում էր ուժեղ բյուրյակապնաւ Մամայը:

Իրենց առաջնությունը պահպանելու համար Մոսկվայի բնակչությունը, այն ժամանական պետական խոշորագույն գործիչներից մեկի՝ միարոպալիս Ալեքսեյի գլխավորությամբ, վորոշեցին պայքարի գորս պալ Դիմիտրի Կոնստանտինովիչի դեմ: Իրենց անչափահան իշխան Դիմիտրի Խվանովիչ համար նրանք Մյուրիքից առ Վոսկե Հորդայի անգրվարդյան մասի վաստակամն կառավարող Մամայը Մյուրիքից զդաւիրեն ուժեղ է: Դա ստիպեց Մոսկվայի բորբներին 1362 թ. յերկրորդ անգամ ճրամանագիր ձեռք բերել, ստիպեց այս անգամ վոչ թե Մյուրիքից, այլ Մամայից: Յերբ Մյուրիքն իշխան զարգան, վոր Մոսկվան Մամայից հրամանագիրը, անմիջապես ճրամանագիրն ուղարկեց Սուզդալի իշխանին: Դիմիտրի Կոնստանտինովիչը ճրամանագիրն ըն-

գունեց և նորից վոխաղը վեց վալադիմիր, սակայն տասներկու սորից հետո, վախենալով Սոսկվայի ուղարկած զորքից, վախավ վաղիմիրից և վակվեց Սուզդլալում: Այսուեղ շրջապատվեց մոսկվական կողմից, հանձնվեց և յենթարկվեց Սոսկվային: Այսկողեների կողմից, հանձնվեց և յենթարկվեց մոսկվայի վերջացավ, Մոսկվայի և Սուզդլի միջև սկսված կռիվը վերջացավ կողմերի հաշտությամբ: Դիմիտրի Կոնստանտինովիչը հասկացված, վոր Սուզդլի և Սոսկվայի ուժերի հարաբերակցությունն առաջ, իր Սուզդլալի և Մոսկվայի համար հարաբերակցությունն իր ողափին չեն, և յեր 1365 թ. Վոսկե Հորդայից նրան նորից մեծ իր ողափին չեն, և յեր 1366 թվին Մոսկվայի և Սուզդլի համաձայվայի: Հետեւյալ—1366 թվին Մոսկվայի և Սուզդլի համաձայվայի: Հետեւյալ—1366 թվին Մոսկվայի և Սուզդլի համաձայվայի: Դիմիտրի Կոնստանտինովիչը աղջկա հետ:

Մոսկվայի մյուս՝ զգալիորեն ավելի ուժեղ ախոյան հանդես յեկալ Տվերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը, վոր մոտիկ ապյական հարաբերություն մեջ եր գոտիում Լիտվայի իշխան Ոլդերդի հետ: Միխայիլին և Ոլդերդին կապում եր Մոսկվան թուրացնելու և նրա «հավաքադրական» քաղաքականությունը դադարեցնելու ընդհանուր ձգտումը: Լիտվայի իշխանների տիրապետության ներքո այն ժամանակ ուուսական շատ մարզեր կատարվեն, ընդդուռում Ոլդերդն ընդհանրապես մտադրություն ուներ իր ապդեցությունը տարածել ուուսական բոլոր հողերի վրա: Հատկապես նրան գրավում եր նովդորոդը և Պակովը գրավելու հեռանկարը: Հենց այս պատճառով Ոլդերդն ուրախությամբ ակտիվ մասնակցություն ունեցավ Մոսկվայի ղեմ Տվերի մզած պայքարին և շատ անդամ իր զորքերը ուղարկեց Մոսկվայի հողը: Տվերի իշխանի խնդրանքով նոր յերկու անդամ մուտեցավ Մոսկվային և այն շրջապատեց: Սակայն լիտվական իշխանների հափշտակադական մտայնության իրականացումը Մոսկվայի նման այդպիսի մեծ, ուուսական ժողովրդի ազդային միավորման իշխանություն գարձող ուժի գոյության պայմաններում, միանդամայն աներկայակալի յեր: Թեսկետ և Ոլդերդի յերկալը Մոսկվայի ժուտ միշտ հանկարծակի յերեկո, սակայն Մոսկվան վերցնել նրան չհաջողվեց: Նախկին կաղնե պարիսպների վոխարեն հենց նոր (1367 թ.) քարե բարձր պարխապներով շրջափակված և ընտիր գնդերով պաշտպանվող Մոսկվան անառիկ հանդիսացավ: Լիտվայի իշխանը, կողովուելով բնակչությանը և հրի մատնելով շրջապատող զյուղերը, ամեն անդամ նահանջում եր Մոսկվայից և վերադառնում Լիտվա:

Մոսկվայի վրա կատարած իր յերկրորդ արշավանքից հետո (1370 թ.) Ոլդերդն ստիպված եր զինադադար կնքել Դիմիտրի հիւանովիչի հետ:

Զրկվելով նրա ոգնությունից, Տվերի իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչը դիմեց Վոսկե Հորդային, ուր և ակտիկ ոժանդակություն ստացավ: Հետությամբ ձեռք բերելով մեծ իշխանի հրամանադիրը, նա այդուհանդերձ վաստորեն չկարողացավ նրանից ոգտվել, վոր Մոսկվայի իշխանը նրանից զգալիորեն ուժեղ և, Վոսկե Հորդան նրան առաջարկեց ոժանդակություն իր զորքով, սակայն Միխայիլ Ալեքսանդրովիչը ստիպված յեղակ հրաժարվել այդ առաջարկեց, վախենալով դրանով ընդհանուր ատելություն առաջացնել իր դեմ, մանավանդ վոր լինվական զորքերի հաճախակի հրավերումը նրա կողմից՝ նրա դեմ ուժեղ անբավականություն եր առաջարկել հյուսիս-արևելյան բոլոր իշխանություններում:

Վոսկե Հորդայից նա վերադարձավ խանի լիազոր Սարիխոնայի հետ՝ հավատացած լինելով, թե միայն հրամանագիր ստանալու փաստը և Վոսկե Հորդայի հատուկ լիազորի գալն իր հետ՝ միանգամայն բավական է, վոր Մոսկվան իրեն յենթարկվի:

Սակայն դեպքերի հետագա գարզացումը ցույց տվեց, վոր խանի հրամանադրերի անխոս կատարման ժամանակներն անցել են, իմանալով Տվերի իշխանի ձգտումները՝ Դիմիտրի Իվանովիչը, ուշադրություն չդարձնելով խանի հրամանագրեն, վոր պարտադրում եր վաղիմիրոցներին և մյուս քաղաքների բնակչներին յենթարկվելու Միխայիլ Ալեքսանդրովիչին՝ վորպես մեծ իշխանի, նրանց բոլորին յերդվեցը և պահանջեց հավատարիմ լինել իրեն: Յերբ Միխայիլ Ալեքսանդրովիչը և Սարիխոնան հանգիստով կերպով կերպով յեկան վերդիմիր, նրա բնակիչները կատարելով Դիմիտրի Իվանովիչին տված խոստումը, նրանց ընդունեցին: Խանի զայրացած ներկայացուցիչը պահանջեց Դիմիտրի իվանովիչից անմիջապես մեկնել Վլադիմիր: Սակայն Դիմիտրին այդ պահանջին ումեց հանդիսու, արժանապատվությամբ և զետի իր ուժերը վատահությամբ լի պատասխան ՀՀ Հրամանագիրը ստանալու չեմ դնա, չեմ թողնի, վոր Միխայիլը Վլադիմիրի իշխան դառնա, իսկ քո՝ թագավորի լիազորից ճանապարհը բաց ես: Դրա հետ մեկտեղ նա Սարիխոնային ուղարկեց հարուստ նվերներ և Մոսկվա մեկնելու հրամերք: Փոքր տատանումներից հետո Սարիխոնան ընդունեց նվերները և հրավերքը: Գաղագած դրանից,

Միայն Ալեքսանդրովիչն ավերեց Մոսկվայի մի քանի քաղաք-ները և վերաբարձար Տվեր, վորտեղից իր տղային ուղարկեց Վոսկե Հորդա՝ բողոքելով Դիմիտրի Իվանովիչի և Սարգիսիայի դեմ: Դիմիտրի Իվանովիչն իր կողմից ճոխ պարզեատրված Սարեինչայի խորհրդով նույնպես մեկնեց Վոսկե Հորդա: Խանին և սրա մերժավորներին բերած նրա բազմաթիվ նվերները հարցը լուծեցին Մոսկվայի ոգաբն: Դիմիտրի Իվանովիչը վոչ միայն մեծ իշխանի, հրամանառաջիր ստացավ, այլև ձեռք ըերեց հարկերի չափի զդալի իշխում: Դա Մոսկվայի խոշոր հարթանակն եր: Մեկնելով Վոսկե Հորդայից՝ Դիմիտրի Իվանովիչը, Տվերի իշխանին իրենից կախան մեջ դնելու համար՝ խանից տառ հազար սուրլով զնեց Տվերի իշխանի տղային: Անհաջողության մատնիւ-լով՝ Միայն Ալեքսանդրովիչը նորից դիմեց Լիտվայի ողնու-թյան: Ենթար ջանքերից հետո նա հանդեցրեց լիտվական զար-քերի զալը: Վորանիալի նրանց չթողնեն մոտենալու Մոսկվային: Մոսկվայի գորքերը դուրս յեկան նրանց հանդիման և ջարդեցին իմաստան պահպանական դումում: Կարուգայի մոտերքում յերկու բանակներն ել զասավորվեցին իրը և մեղաձև ձորակի հակառակ կողմերում: Վակայն նրանց միջն ճակատամարտ տեղի չունեցավ, զորով հետեւ Դիմիտրի Իվանովիչը և Ալեքրէլ խաղաղության պայմանագիր կնքեցին: Մոսկվան պարտավորվեց չանհանգուաց-նել Միայն Ալեքսանդրովիչին: Տվերում, իսկ Լիտվան այդ պայմանով հրաժարվեց հետապայում ողնություն ցույց տալ Տվե-րի իշխանին:

Միայն Ալեքսանդրովիչն իրեն վիրավորված համարելով՝ չկարագացավ հաշտիկ Մոսկվայի, հաղթանակի հետ և մի ան-գամ ևս դիմեց Վոսկե Հորդա, խնդրելով ուղարկել իրեն հրամա-նադիր կամ ոժանդակություն՝ զորքով: Նրա այդ խնդիրքը մա-սամբ բավարարվեց—խանի հատուկ լիազորը նրա համար բերեց խնդրած հրամանադիրը: Թևակարգած Վոսկե Հորդայի այդ ոժանդակությամբ, գրա հետ մեկանդ հույս դնելով թաթարական և լիտվական զորքերի ողնության վրա, դյուրաբորք և անհամ-րեր Միայն Ալեքսանդրովիչը 1375 թ. Դիմիտրի Իվանովիչին պատերազմ հայտարարեց: Վակայն նրա հույսերը և հաշիմերը չարդարացան, նա զգալի գորեւ ոժանդակություն չստացավ վոչ թաթարներից, վոչ եւ լիտովցիներից:

Դիմիտրի Իվանովիչը հայաքելով Մոսկվայի գնդեռը, չարդ-գեց գեղարի Տվեր: Մոսկվայի զորքերին միացան նովդորոցցիները և տառներնը իշխանների զորքերը: Անցնելով միայնալ այդ ու-

ժերի գլուխ՝ Դիմիտրի Իվանովիչը ըրջապատեց Տվերը: Պայքա-րի յերբ վարոշիւծ եր վոչ միայն Դիմիտրի Իվանովիչը տրա-մադրության տակ յեղած զինված ուժերի գերազանցությամբ, այլ և ժողովրդի ընդհանուր վրդով Միայն Ալեքսանդ-րովիչի դեմ, վորառած եր յեկի Վոսկե Հորդայի հետ նրա հա-մաձայնությունների հետեւանքով: Տվերին ողնությունը յե-կող լիտովցիներն, խանակուլ Մոսկվայի զորքի չառությունը, հետեւանքով: Տվերին ողնությունը յե-կող լիտովցիներն, խանակուլ Մոսկվայի զորքի չառությունը: Միայն Ալեքսանդրովիչը հասկացավ հետա-գա պայքարի անհուսալիությունը և դժմեց Դիմիտրի Իվանովի-չին և հաշտությունն ինդրեց: Դրա հետեւանքով կնքված համա-ձայնությամբ Մոսկվայի գլուխոր, առավել ուժեղ և համա-մրցակիցը զրվեց Մոսկվայից կախվածության, նրան ինթարկ-վածության զրության մեջ:

Այդ համաձայնությամբ Միայն Ալեքսանդրովիչը եր և իր վորդիների կողմից պարաւազորվում եր իրեն Դիմիտրի Իվանո-վիչի կրտսեր յեղայր համարելու, նրա հետ միասին արշավի դուրս գալու, այլև չձգտելու մեծ իշխանությունը կամ Մոսկվան ձեռք բերելու վոչ ինքնուրույն և վոչ եւ թաթարների միջոցով:

Հաշվի առնելով ոռուսական իշխաններին իրար վեճ հրահրե-լու վոսկե-հորդայական քաղաքականությունը՝ համաձայնու-թյունն արգելում եր Տվերի իշխանին վորեւ համաձայնության մեջ մտնելու վոսկե Հորդայի հետ և պահանջում եր, վոր Տվե-րի իշխանը հրաժարվի հրամանագրից այն գեպքում, յեթե Վոս-կե Հորդան նրան մեծ իշխանի հրամանագիր առաջարկի: Կաշի-նի իշխանությունը, վոր առաջ մտնում եր Տվերին յենթակա հո-գերի կազմի մեջ, հայտարարվեց ինքնուրույն, իսկ փաստորն զրվեց կախման մեջ Մոսկվայից:

Այդշաբան, համաձայնության կարեսրագույն պայմաններից մեկն եր Տվերի իշխանի՝ զորքով թաթարների դեմ գուրս զալու պարտավորությունը, յեթե Մոսկվայի մեծ իշխան Դիմիտրի Իվանովիչը արշավ հայտարարի նրանց գեմ: Ռուսների թաթնված իրզը, վորի մասին առաջ բացահայտորեն չեր խոսվում և անհրա-ժեշտ գեպքում այլարանորեն ակնարկվում եր, չիմա պարզ և հստակ, ձեռվ մարմնացավ պայմանագրի հիմնական կետերից մե-կում: Մրանից քիչ առաջ Մեմյոն Գորդին իր կատկի մեջ ժո-ւանդներից համերաշխություն պահանջելով և նախազգուշացնե-լու զժություններից՝ ցանկանում եր ասել, թե այդ հա-մաձայնությունը և համերաշխությունը անհրաժեշտ և ոտարե-կը ըստ ամբարեատությունը տապալելու համար, բայց չեր համար-


ձակվում իր միտքն ուղղակի ասել, այլ դիմում եր պատկերավոր արտահայտության. «Այս խոսքերը դրում եմ ձեզ նրա համար վորակեազի մեր մոմը չհանդէի»:

Այդ մոմը վոչ միայն չեր հանդէում, այլ և Դիմիտրի իշխանովիչի որով սկսեց վառ լույս տալ: Դա արտացոլվեց պայմանագրի հետեւյալ կետում. «Յեթե թաթարները դան մեր կամ քոդեմ, մենք և դուք միասին միահամուռ ուժերով պետք ե կովենք նրանց դեմ, յեթե մենք զնանք նրանց դեմ, դու ևս մեզ հետ միասին պետք ե գնաս նրանց դեմ»: Հետեւապես, պայմանագրիրը վոչ միայն նախատեսում եր միատեղ գործողություններ թաթարների հարձակումը հետ մզելու համար, այլ և հնարավոր եր համարում ակտիվ յերտյթը նրանց դեմ: Ուժի և ածող զորության գիտակցությունը հնարավորություն եր տալիս Մոսկվային ուղղակի և բացեիրաց հայտարարելու Վոսկե Զորդայի հետ ուղղական ընդհարման իր պատրաստության մասին:

Մոսկվայի փայլուն հաղթանակը Տվերի դեմ և նրանց միջև կնքված համաձայնության պայմանները Տվերի նախկին հովանավորուների մեջ առաջացրին զայրույթի պորթկում և յերկյուղ՝ դեպքերի հետագա զարգացման նկատմամբ:

Լիտվայի իշխան Ոլգերդը, չհամարձակվելով անմիջապես յելնել Մոսկվայի դեմ, հարձակվեց Սմոլենսկի իշխանության վրա և ամերեց այն, վորպես պատիժ այն ողնության համար, վոր ցույց եր տվել Սմոլենսկի իշխանը Դիմիտրի իշխանովիչին՝ Տվերի վրա նրա կատարած արշավի ժամանակ: Լիտվան դրանից ավելի հեռու գնալուց յերկյուղ եր անում, իսկ յերբ 1377 թ. Ոլգերդը մահացավ, Լիտվայի իշխանների միջև պայքարն ուժնեղացավ, վորի հետեւանքով Ոլգերդի յերկու տղան՝ Անդրեյը և Դիմիտրին՝ հոժարակամ ծառայության անցան Մոսկվայի իշխանի մոտ:

Վոսկե Զորդայի անբավականության հետեւանքներն զգալիորեն լուրջ յեղան: Խանի անունով կառավարող Մամայը այդ ժամանակ խան դարձավ: Խելոք և հեռատես քաղաքակեալ հասկանում եր, վոր Մոսկվայի չափազանց ուժեղացումը և բարձրացումը սպառնալիքի տակ և գնում թաթարների հետազա տիրացումը սպառնալիքի տակ և գնում թաթարների հետեւանքների բարձրացայտ արհամարհանքը Հորդայի կարգադրությունների հանդեպ, խանի կողմից Տվերի իշխանին տված մեծ իշխանի իրավունքը ճանաչելուց նրա հրաժարումը՝ գրգռում ելին Մամային և նրա արքունական մերձավորներին: Վոսկե Զորդայի աշքում դա-



Ճակատամարտ Կումիկովյան դաշտում  
Մանրանկար ձեռագիր Հրատարակությունից

դեռ չլաված հանդպնություն եր: Թաթարների բոլոր բարձր աստիճանավորները, զորավարները և կառավարողները սովորել ենին ուսուս իշխանների հարկադրական հնագանդությանը, խանի կամքի անխոս կատարմանը, հաճախակի մեծ նվերներին: Նրանք բոլորը հիշում ենին, զոր բոլորովին վերջերս Դիմիտրի Խվանովիչը, վիճարկելով Տվերի իշխանի հետ մեծ իշխանի իրավունքը, հարկ համարեց գալ Վոնկե Հորդա և խանի ձեռքից հրամանաւել:

Մամայը նախ և առաջ վորոշեց դաժանորեն պատժել Մոսկվայի ձեռքի տակ անցած իշխաններին՝ նրա համար, զոր նրանք մասնակցել են Տվերի գեմ արշավին և ընդունել են Մոսկվայի առաջնությունը:

Մամայի կարգադրությամբ թաթարական մեծ ջոկատներ ուղարկվեցին Նիժնի-Նովգորոդի և Նովոսիլկի շրջանները: Կողոպտելով և ծեծելով բնակչությանը, ամայացնելով՝ քաղաքները և այլելով՝ զյուզերը, թաթարական դինուրները բացականչում ենին: «Ինչու կովեցիք Տվերի դեմ»: Նրանց հանկարծակի հարձակման պատժիչ ընույթը միանդամայն պարզ եր: Իմանալով, զոր կաշինի իշխանությունը հետացել է Տվերից, նրանք նորինուժեցին նրա սահմանները և այրեցին Կաշին քաղաքը, իսկ հետո շատ գերիներ վերցնելով հեռացան:

Պարզ եր, զոր պատժիչ այդ գործողություններով Վոնկե Հորդան չի սահմանափակվի:

Յերկարուղ կրելով Մոսկվայի յերկրի վրա թաթարական զորքերի հանկարծակի հարձակումից, Դիմիտրի իշխանովիչը շատ զորք հավաքեց և մեկնեց Ոկայի մյուս կողմը: Տագնապը վաղաժամ դուրս յեկալ: Թաթարները չերեացին: Յերկու տարի հանդիսավոր կայսեր վերցրին:

1377 թ. թաթարները մինչև այդ անհայտ արքայորդի Արագիշի հրամանատարությամբ նորից հարձակվեցին Նիժնի-Նովգորոդի յերկրի վրա: Իրենց անփութության հետևանքով՝ հանկարծակի բերված՝ Նիժնի-Նովգորոդի զորքերը և նրանց ոժանդակության յեկած Մոսկվայի գնդերը Պյանա դետի մոտ ջարդվեցին: Նիժնի-Նովգորոդը թաթարները վերցրին և ավերեցին:

Այդ հաղթանակը վողերից թաթարական զորապետներին և հետեալ՝ 1378 թ. Մամայը թաթարական յերկու ուժեղ ջոկատուղարկեց ոռւսական հողերը: Դրանցից մեկը հարձակվեց Նիժնի-Նովգորոդի վրա, իսկ մյուսը Բեգիչի հրամանատարությամբ

զնաց Մոսկվայի վրա: Իմանալով թաթարների մոտենալու մասին՝ Դիմիտրի իվանովիչն անմիջապես շարժվեց նրանց հանդիման և նրանց հետ ընդհարվեց Ռյազանի իշխանության սահմաններում, Ոկայի աջ վտակի՝ Վոժա գետի ափերին:

Անցնելով գետը՝ թաթարները բարձրածայն աղաղակով հարձակիցին Մոսկվայի զորքի վրա, վորը պատասխանեց յեռանգուն գրոհով յերեք կողմից: Կենարունում հրամանատար երինքը Դիմիտրի իվանովիչը, իսկ թեւերում՝ Պրոնոկի իշխան Դանիլը և Մոսկվայի գլուխիկ Տիմոֆեյը: Թաթարները զլիսովին ջարդվեցին և խուճապահացար վախան Վոժայի մյուս կողմը, ընդվորում փոխադրման ժամանակ առաջացած իրարանցման պատճառով չատ թաթարական հեծյալներ խեղդվեցին: Գիշերը և առավոտյան խիտ քառախուզը խանդարեցին անմիջապես հետապնդում կազմակերպելուն: Միայն հաջորդ որվա ինուն Մոսկվայի զորքերը առաջ շարժվեցին և տափառանում գրավեցին հակառակորդի ամրող գումակը: Այդ պարտությունից չարացած՝ Մամայը հարձակից Ռյազանի մարզի վրա և ավերեց այն պատճառով, վոր թաթարական զորքերի անհաջողությունը տեղի յեւ ունեցել այդ իշխանության սահմաններում: Հարձակումից վախեցած՝ Ռյազանի իշխան Ռեկ իվանովիչը մեկնեց Հորդա և իր հպատակությունը հայտնեց ինանին:

Թաթարների պարտությունը Վոժայի մոտ՝ ոռւսական զորքերի առաջին լուրջ հաղթանակն եր նրանց զեմ: Այդ հաղթանակը ցույց տվեց Մոսկվայի գնդերի մարտական լավ պատրաստությունը և մինչև այդ անհաղթելի համարված թաթարական զորքերի պարտության հնարավորությունը: Ոռւսական ազգային միավորման սկսված պրոցեսն անկառակած անդրադառել եր Մոսկվայի զորքի բարոյական վիճակի վրա: Դրանք արգեն անջատ, տեղական շահերով ապրող, հաճախ իրար հետ պատերազմող և պատահարար իրար միացած առանձին իշխանների զնդեր չելին, վորոնց հետ կարկա գետի մոտ մի ժամանակ թաթարները հանդիպել ելին և վորոնց՝ չնայած նրանց հերօսական գիմագրությանը՝ առանձին առանձին ջարդել եր Բատուն:

Միացած մի միանական հրամանատարության ներքո, վոր ժամանպահական հագարապետի պաշտոնը վերացնելուց հետո Դիմիտրի իվանովիչն եր վրա վերցրեց, Մոսկվայի զորքն արդեն իրեն դիտակցում եր վորովես մի միանական ամրողություն, վորը պաշտպանում է ամրող Ոռւսաստանի շահերը:

Բարոյական իր հսկայական նշանակությամբ՝ հանդեմ,

Մոսկվայի իշխանների հաղթանակը Վոժայի մոտ Վոսկե Հորդայի և Մոսկվայի բացահայտ պայքարի միայն ոկիզըն եր: Այդ հասկացել եյին և Դիմիտրի իվանովիչն ու նրան յենթակա իշխանները և Մոսկվայի բոյարությունը: Բոլորի համար պարզ եր, վոր պետք և սպասել, թե թաթարական բոլոր ուժերը կհարձակվեն Մոսկվայի վրա, ուստի և անհրաժեշտ է շտապ պատրաստվել դրա դեմ:

1380թ. ամառվա սկզբին Մոսկվայում սկսեցին լուրեր տարածվել Մամայի արշավանքի նախապատրաստության մասին: Ի հաստատումն այդ լուրերի նյազանի իշխան Ռեկ կողմից մի ձիավոր յեկալ և հաղորդեց, թե Մամայը մեծ զորքով մուտեցել և Դոնին և կանգ և առել Վորոնեժ գետի մոտերքը: Դիմիտրի իվանովիչը, վորը վաղուց պատրաստվում եր Վոսկե Հորդայի հետ բաղխավելու, հենց վար տեղեկություն ստացավ թաթարական զորքերի շարժման մասին, իսկույն հեծյալներ ուղարկեց յենթակա իշխանների, մարգերի և իշխանությունների մոտ: Հատուկ կոչնակներ և մունետիկներ գյուղերում և քաղաքներում բարձրածայն հայտարարում եյին Մամայի զեմ պատերազմը սկսվելու մասին, և կարգում եյին իշխանական հրովարտակներ:

Մոսկվա առաջինն յեկալ Դիմիտրի իվանովիչի հորեղբորդ զորդի Սերպուխովի իշխան Վլադիմիր Անդրեյեվիչը: Հենց այդ ժամանակ Մոսկվայում լուր ստացվեց Ռյազանի իշխան Ռեկ գաղանակության մասին: Մտածելով միայն իր մասին՝ Ռեկը գաղանի բանակցությունների մեջ մաս լիտվական իշխան Յագայովի և Մամայի հետ՝ յերկուսի մոտ ել հատուկ լիազորներ ուղարկելով: Ունեկը հայտնում եր Յագայովին Մամայի արշավի մասին և առաջարկում եր նրան միանալ թաթարների հետ՝ նրանց հազթանակից հետո Մոսկվայի Հողերը Ռյազանի և Լիտվայի միջև բաժանելու պայմանով: Մամային ուղղված նամակում նա դանդապավում եր Մոսկվայի իշխանից վորպես նրան հնուց վիրավորողից, լիակատար նվիրվածություն եր արտահայտում Վոսկե Հորդային և Մամային համոզում եր, վոր Դիմիտրի իվանովիչը չի համարձակվի մարտի բոնվել թաթարական զորքերի հետ և կաշխատի մի վորես տեղ թագնվել:

«Տեր իմ, յիս լուկ եմ, — զրում եր Ունեղը Մամային, — վոր զու ուկում և գնալ և սպանալ քո ծառու՝ Մոսկվայի իշխան Դիմիտրուն: Լուսափայլ թագավոր, չիմա հասել և վոսկու և շատ հարստությունների ժամանակը: Դիմիտրի իշխանը հենց վոր լոի քո զայրագին անունը, կիմախչի հեռու տեղերը՝ կամ Մեծ

Նովգորոդ, կամ Դվինա. իսկ Մոսկվայի հարստությունը կդժոնիք քո ձեռքում, իսկ ինձ, Ալեք Ռյազանսկուս, քո սորուկին, քո վողորմածությունը չնորդհիբ»<sup>1</sup>:

Ուկի գավաճանության լուրի հետ միասին Դիմիտրի Իվանովիչն իմացավ նաև Լիտվայի իշխանի և Մամայի գաշինքի մասին: Այդ լուրերը հուզեցին Մոսկվային, սակայն Դիմիտրի Իվանովիչն և նրան մոտ կանգնած բոյարների և իշխանների վճռականության վրա չաղղեցին: Խորհրդակցելով Վլադիմիր Անդրեյի վիչի հետ՝ նա յերկրորդ անգամ ձիավորներ ուղարկեց բոլոր շրջանները՝ զորքերի առաքումն արարացնելու կոչով:

Յերբ Մոսկվա ժամանեցին յենթակա մի քանի իշխաններ, Դիմիտրի Իվանովիչը նախքան վերջնական վճիռ ընդունելը, հրավիրեց սպամական խորհուրդ: Բնդհանուր ատելությունը դարձվոր հարստահարիչների գեմ, ամոթալի, Հյուծող լուծը թոթափելու վաղեմի փափառը միահամուռ վրոշման համեցը: Դիմիտրի Իվանովիչի հրավիրած խորհուրդը վրոշեց՝ կանխել Մամայի հնարավոր միացումը Լիտվայի իշխանի հետ և նրան չժողովել Մոսկվային մոռհնալու: Բյազմանցի Ուկի սիսալից: Դիմիտրի Իվանովիչը վոչ միայն չփախավ Նովգորոդ, այլ ինքը շարժից Մամայի զորքի գեմ: Այն մոռը, վորի մասին խոսում եր Սիմյոն Դորդին, բոցավավեց վառ բոցով: Զորք ուղարկելու մասին յենթակա իշխաններին Դիմիտրի Իվանովիչի ուղած կոչն արագործն ատրածինց բոլոր իշխանություններում և շրջաններում վորպես ուրախալի և յերկար սպասված լուր: Այրող ատելությունը հարստահարողների և բոնականների՝ թաթարական խանների և բարձր աստիճանավորների հանդեպ՝ վորքի հանեց ժողովրդական լայն մասսաներին: Յենթակա իշխանների զորքերի հետ միասին գետի հավաքառեղի հայտարարված Մոսկվա և յին անընհատ ժամանում կամավորական բազմաթիվ ջնկաներ: Ամրող ժողովուրդը, թեև հողնած եր, ուժասպառ յեղած ծանր էտի տակ, համերաշխորեն արձադանդեց կոչին: Բոլորին հանկանալի թեր, թե ինչի՞ համար և ում գեմ պետք ե կովկել:

Նկարագրելով արշավի նախապատրաստումը Մամայի գեմ՝ կույիկովյան ճակատամարտի հնագույն պատմապրույցը՝ «Զագոնչչինա»-ն ասում է. «Մոսկվայում ձիերն են խրինջում, փառքն և հնչում ամրող նուսառատանում, Կոլոմնայում չաչում են»

<sup>1</sup> Ն. Կոստոմարով՝ Исторические монографии и исследов., № 528, 1908 թ. հրտ.

շեփորները, Մերպուխովում թմբուկ են հարում, Դանուրի ափերին զրոշակներն են բարձրացել, նևիկորորդում վեշեյի զանգըն և զողանջում»: Այդ ընդհանուր խանդավառությունն ու վոգեկորությունը բոլորին հաղթանակի հավատ եր ներշնչում:

Մամայի գեմ արշավանք կազմակերպելու վարոշումն ընդունելուց հետո հավաքատեղի նշանակված եր կոլոմնան: Թաթարական զորքերի շարժման մասին տեղեկություն ստանալու համար չուրջեղույան տափաստաններն ուղարկվեց պահպանական հեծյալ ջոկատ՝ Ռոգին Ռժեկվուն, Յակով Աւատառ և Վասիլի Տուպիկի հրամանատարությամբ: Ռժեկվունը շուտով լուր ուղարկեց, թե Մամայը առաջ և շարժվում Յավալյոյի հետ միանալու համար:

Մոսկվայի պնդերի և Մոսկվայում հավաքված զորքերի և ջոկանների յելույթը տեղի ունեցավ 1380 թ. ոգոստոսի 20-ին: Յելույթից առաջ Դիմիտրի Իվանովիչը Վլադիմիր Անդրեյևիչի հետ միասին ստուգատես արեց՝ շրջադիտելով Դեվիչյի լայնատարած դաշտում շարված ամրող զորքը: Մտուդատեսից հետո զորքը արշավի գուրբ յեկավ: Թմբուկ զարկին, շեփոր հնչեցրին, փող փշեցին:

Կոլոմնա շարժվեցին յերեք զորասյուններով: Ճանապարհին նորանոր զորքեր և ջոկաններ եյին միանում: Ոգոստոսի 24-ին Կոլոմնայում Մոսկվայից զուրս յեկած բոլոր զորասյունները միացան: Այստեղ նրանք միացան յենթակա իշխանների սպասող զորքերին: Ռուսական բոլոր վայրերից զորքեր եյին հավաքվում: Այստեղ եյին Բելովերսկի իշխաններ Ֆեոդոր Սեմյոնովիչը և Սեմյոն Միխայլովիչը, Խարզովոլի իշխան Գլեբը, յարուլավշի Անդրեյը, սոսոտվշի—Դիմիտրին, Սերգեյսկից—Եկվը, Դրուժիկից՝ Դիմիտրին և Վլադիմիրը, Յելեցի, Մեշերայի, Մուրոմի, Աւայոյութի իշխանները և այլն:

Թաթարների գեմ մզկող կավի Ընդհանուր ազգային նշանակության դիտակցությունը բոլոր իշխաններին համախմբեց Մոսկվայի իշխանի շուրջը:

Զկային միայն ոյազանցիները, տվերցիները և նովկորուցիները: Ռուսական զորքի ընդհանուր թիվը հարյուր հիսուն հազար հոգու յեր հասնում: Դեռ յերբեք ուղարկան բանակն արդարին հակայական քանակի զինվոր չեր ունեցել:


Այն ժամանակ ինչպիս ուղարկել, այնպիս ել թաթարների բանակի զինվորը բազկացուցիչ մասը հեծելազորն եր: Հետեւ զորը պետք ե միայն քաղաքները պահպաններ և պաշտպաններ: Այդ

պատճառով ել բանակում հետեակի պակասն դդացվում էր : Զոր-  
քի սպասազինումը խիստ բազմազն եր, վորովհետեւ ամեն ժեկը  
վիճում եր իր հաշվին՝ իր դրության և միջոցների համապատա-  
խան :

Նետերի և թրերի հարվածից պաշտպանվելու համար այն  
ժամանակ զինվորները պարուրվում եյին պաշտպանողական հա-  
տուկ զրահազդեստով : Այդպիսի զրուհ եյին նախ և առաջ աղա-  
հովիչ զվարկները—սրածայր յերկաթյա ռազավարաները պակա-  
չյուս ցանցով, վորը ծածկում եր գեմքը, վիզը և ուսերը : Ա-  
զավարտի առջեկց, դեմքի մեջտեղից, քթի վրայից, վերից վար  
եր իջնում յերկաթյա պաշտպանական չերտիկ, վորը «քիթ» ա-  
նունն ստացավ : Մարմինը ծածկելու համար զործածվում եր վեր-  
տազրահը՝ լարացանցի թեերով մի հակուստ, վորը համում եր  
միջն ծնկները : Բացի այդ՝ վերտազրահի վերեկց, կրծքի և  
մեջքի վրա հաղնում եյին մետաղյա զրահազդեստ—կրծքակալներ :  
Այդպիսի զրահազդեստ հաղնում եյին նաև ձեռքերին և վատքե-  
րին : Յուրաքանչյուր հեծյալ քառակուսի կամ կլոր վահան ու-  
ներ : Սովորաբար վահանները ներկում եյին կարմիր դուինով :  
Զիավորները զինված եյին կարծ սրերով, կեռ թրերով, զանակ-  
ներով կամ զաշույնով, նիզակներով, նիզանետերով (կարծ  
նիզակներով՝ նետելու համար), նետ և աղեղներով, տապարնե-  
րով, կացիններով, զավադաններով : Հետեակի մարտի համար  
յուրաքանչյուր զինվոր սւներ լախտ՝ մի փոկ կամ շղթա, վորի  
մի ծայրին կար ձեռքին հաղցվող ողակ, մյուսին՝ մետաղյա  
դունդ կամ քար :

## ԿՈՒԼԻԿՈՎՅԱՆ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Կոլօմնայում Դիմիտրի Խվանովիչը նորից զորքերի ստուգա-  
տես արեց և սահմանեց յերթակարգը : Ինչպես յերեսում և, լսելով  
Դիմիտրի Խվանովիչի պատրաստությունների մասին՝ Մամայը  
կոլոմնա ներկայացուցիչ ուղարկեց՝ առաջարկելով տուրք վճարել  
այն չափով, վորքան վոսկե Հորդան ստանում եր Ռուզեկ և Զանի-  
բեկ խաների որոր : Համաձայնվելով պակասեցված տուրք վճարել՝  
Դիմիտրի Խվանովիչն այդ առաջարկին մերժումով պատասխա-  
նեց : Զորքը յերթի դուրս յեկավ : Ճանապարհները և թաթարա-  
կան ճմեռանցները լավ ճանաչող տաս վաճառականների վերցրին  
վորպես ուղեցուցյաց : Կոլոմնայից զորքերը գնացին վոչ թէ Ռյա-  
զանի հողերով, թեպետ և այդ ճանապարհն ամենակարծն եր, այլ



վոչ մեծ թևանցումով՝ Ակայի ձախ ափով։ Այդ արվում եր կան-  
խամտածված ձեռվ՝ խուսափելու համար Մյազանի զորքի հետ  
ընդհարվելուց։

Այսուղ, ուր լոպասնյա Գետը Ակա յե թափվում, Դիմիտրի  
իվանովիչը միորյա գաղար արեց։ Այսուղ նրան իր Տետևակ  
զորքով միացալ Մոսկվայի զորավար Վելյամինովը։ Հեծյալ զոր-  
քն Ակայի մյուս ափը փոխադրվելուց հետո՝ հետախույզության  
համար ուղարկվեց Հեծյալ ընտիր մի ջոկատ։ Մեմյոն Մելիքի հրա-  
մանատարությամբ։ Հետևակ զորքը զորավար Վելյամինովի հետ  
փորոշ ժամանակ թողնվեց այդտեղ՝ անցումները պահպանելու և  
ուշացածներին գիմավորելու համար։ Դեպի Դոնը տանող ձանա-  
պարհին իրենց զորքով ուղաներին միացան Լիտվայի իշխաններ  
Անդրեյ և Դիմիտրի Ալեքսանդրովիչները։ Այժմ ուղին անցնում եր  
Ռյազանի հողերով։ Բոլոր զորքերին խստագույն հրաման եր տրր-  
ված՝ վոչ մի բանով վիրավորանք չհասցնել բնակիչներին։ Դի-  
միտրի իվանովիչը գիտեր, վոր Մյազանի զորքերը վտանգավոր  
չեն, սակայն իր ուժերը չըլատելու համար՝ ամեն միջոց ձեռք եր  
առնում նրանց հետ ընդհարումից խուսափելու համար։

Մոտենալով Դոնին, Նելլյադվար գետը Դոնը թափվող տե-  
ղից վոչ հեռու, Մոսկվայի զորքերը կանգ առան՝ սպասելով հե-  
տեւակի դալուն։ Յերկու յերեք որ հետո, Մեմյոն Մելիքի պահ-  
պանական գնդի ձիավորները հայտնեցին, վոր Մամայը Դոնի  
մյուս կողմումն և գտնվում, յերեք վոչ մեծ չվերթի վրա։ Մոսկ-  
վայի զորքերի արշավի մասին նա վոչինչ չզիտեր և, սպասելով  
Ուկա Մյազանոկու և Յագայլո Լիտովսկու զորքին, զանգաղ  
առաջ եր շարժվում։ Այդ ժամանակ հասան ուղանական զորքի հետ  
մնացած բոլոր մասերը։

Մոսկվայի զինվորական պետերի առջև հարց ծագեց՝ այս-  
տեղ սպասել թաթարներին, թե՞ անցնել Դոնը և գնալ թշնամու  
գեմ հանդիման։ Թե՛ մեկը և թե՛ մյուսն ունեցին իրենց զրական և  
բացասական կողմերը։ Դոնի վրայով փոխադրվելը, անհաջողու-  
թյան գեալքում, կկտրեր նահանջի ամեն մի ճանապարհ և այս  
տեսակետից վտանգավոր եր։ Սրա հետ մեկտեղ, փոխադրվելով  
Դոնի վրայով, ուղանական զորքերը կարող եյին խանդարել թա-  
թարական ուժերին միանալու լիտվականի հետ, վոր իշարկե զլա-  
լիորեն ամելացնում եր հաջողության յերաշխիքները։ Դիմիտրի  
իվանովիչի կողմից հրավիրված խորհրդում կարծիքները բաժան-  
վեցին։ Մի փոքր մասը խորհուրդ եր տալիս զգույշ լինել, մտա-  
նացույց անելով այն, վոր թշնամիները շատ շատ են, այսուղ

Են՝ թաթարները և ոքազանցիները և լիտվան: «Յեթէ դետը թողնենք մեր հետեւ—ասում եյին զգուշության կողմնակիցները—դժվար կլինի գալ, իսկ մենք պետք ե հետ դառնալու ձանապարհ՝ պահենք»:

Ավելի փորձված և վճռական մարդիկ հակառակ խորհուրդներն առաջին:

«Յեթէ համառ ճակատամարտ ես ուզում, կարգադրիր այսոր և բարեկարգութելու, վորպեսզի վոչ վոքի մտքով չանցնի հետ զառնալ: Թող ամեն մեկը կոմի անխարդախ, թող չմտածի փըրկվելու մասին, այլ ժամ ու ժամ սպասի իր մահվան. ասում են, թե նրանց ուժերը շատ են, դրա առաջ մենք չկետք ե կանգ առնենք...»<sup>1</sup>:

Խորհրդում Դիմիտրի Իվանովիչն ասաց. «Սիրելի՛ մտերիմներ և յեղաբեններ: Գիտեք, վոր յես յեկել եմ այստեղ վոչ թե Ալեկին և Յավայլոյին նայելու կամ Դոն գետը պահպանելու, այլ ուսուական հողը գերությունից և քայլայումից ազատելու կամ իմ զլուխը Թումիայի համար զնելու:

Պատվարեր մահն անպատիվ ապրելուց լավ ե: Լավ կլիներ բոլորովին չենել թաթարների դեմ, քան յենել և վոչինչ չառնով հետ վերադառնալ:

Այսոր ևեր կգնանք Դոնի այն կողմը և այնտեղ կամ կիալքենիք և ամբողջ ուսու ժողովուրդը կիրկենիք կործանումից, կամ մեր զլուխները կգրենիք մեր հայրենիքի համար»:

Խորհրդը մեծամանությամբ արտահայտվեց վոխագրվելու կողմ: Այլ վարչումը համապատասխանում եր ընդհանուր վողեռությանը և հնարավորություն եր տալիս ուսուական զորքին և զորապետներին՝ մարտական նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցնելու:

Զորքերը հրաման ստացան կամուրջներ կառուցելու և անցարաններ վրանելու:

Փոխադրման ժամանակ անսպասելիորեն սրարշալ յեկավ Սեմյոն Մելիքն իր ջոկատով և հայտնեց, վոր ինքն արդեն ճակատամարտել և թաթարական առաջարկաւուն զորամասերի հետ: Այսովով Մամային հայտնի դարձալ ուսուական զորքի դալը՝ Մելիքի ասելով՝ Մամայն արագորեն առաջ եր շարժվում, այն հաշվով, վոր մինչև Յավայլոյի դալը խանգարի ուսուական զորքի վոխագրվելուն: Խսկապես, սեպահմբերի 8-ի գիշերը, յերբ



Զրահաղեստ, զտնված Կուլիկովյան զաշում

<sup>1</sup> Ն. Կոստոմարով՝ Исторические монографии и исследов., 1930 թ., էջ 535:

Դիմիտրի Խվանովիչի զորքերը փոխադրվում եյին Դոնով; Սամայը հանդսակի տեղավորվեց նրանից ընդամենը 7—8 վերտոի վրա:

Ծուռական և թաթարական զորքերը հանդիպեցին Նեպրյադվա վտակի Դոնը թափվելու մոտակայքում: Բլուրներով և ձռակներով ծածկված, Սմոլկա, Կուրցա և Ստորին Դուրիկ գետերով անջատված այդ վայրի կենտրոնը ճահճային մեծ գաշտ եր ներկայացնում, վորտեղ առատորեն բազմանում եյին կտցարները: Այսուղից ել առաջացավ նրա անունը—Կտցարների գաշտ (Կուլիկովյան դաշտ): Գետերի սեպաձև ափերին բոլոր կողմերում խիտ անտառ եր բուսած: Նույնպիսի խիտ անտառով ծածկված եյին բազմաթիվ խոր ձորերը:

◀ Սեպտեմբերի 8-ին խիտ մասախուզը ծածկեց ամբողջ վայրը: Մասախուզի քողի տակ ոռոսական զորքերը մարտակարդ ընդունեցին և ձեռնոտու դիրքեր զբավեցին՝ հաշվի առնելով վայրի կազմությունը և թաթարական զորքի տակտիկան: Աջ թեր ըրվում եր Ստորին Դուրիկի խորդուրորդ և անտառածածկ ափերին, իսկ ձախը՝ Սմոլկայի սեպ սարերին: Զորքի այսպիսի դաստիարակումն անհնարին եր դարձնում, վոր թաթարական դրապետական իրատեն իրած յեղանակը՝ Հակառակորդին բոլոր կողմերից ըրջապատել:

Առջեւում իշխաններ Դիմիտրու և Վլադիմիր Դրուցկու հրամանատարությամբ կազմվեց առաջավոր զունդ, վորը կազմված եր զլլավորապես հետեակից: Նրա կազմի մեջ մտնում եր Վելյամինովի հետեազորը և Սեմյոն Մելիքի պահպանական ջոկատը: Առաջավոր զնդի հետեւում կանգնած եր մի մեծ զունդ, վորի կողքին դաստիորված եյին աջ և ձախ թեր գնուերը: Աջ թեր զնդի հրամանատարն եր Անդրեյ Ռլդերովիչը, իսկ ձախինը՝ Բելոզերսկի իշխանները: Մեծ զնդի զլում եր կանգնած Մոսկվայի զորավար Տիմոֆեյ Վասիլիվիչ Վելյամինովը: Մեծ զնդի հետեւում կանգնած եր պահեստի զունդը Դիմիտրի Ռուբրոկի զլիսալորությամբ:

Դրանից բացի, ձախի թեր հետեւում, խիտ անտառում գարան եր մտել մի հեծյալ ընտիր մեծ ջոկատ՝ Վլադիմիր Անդրեյևիչի և զորավար Դիմիտրի Բորբոկի զլիսալորությամբ:

Զորքը մարտական պատրաստության բերելով՝ Դիմիտրի իվանովիչը ըրջադիտեց այն և վոգերեց հայրենիքը պաշտպանելու իր կոչով: Ի պատասխան այդ կոչին հնչեցին ճակատա-

մաքտի սկսվելուն անհամբեր սպասող զինվորների միահամուռ,  
հուժկու, վստահ և մարտական ձայները;

Ժամի տասին դիշերային մառախուզը ցըլեց :

Արեւ տակ վառ փայլում եյին ոռուսական զորքի գենքից  
և զբահահանդերձը։ Ամենուրեք փողփողում եյին իշխանների և  
Մոսկվայի զնդերի գրոշակները։ Նրանց միջից իւստ ջոկվում,  
կենտրոնում վեր եր բարձրանում մեծ իշխանական գրոշակը։  
Ամեն ինչ պատրաստ եր ճակատամարտի համար։

Ծուռական հին սովորույթի համաձայն՝ Դիմիտրի Խլանովին,  
ինչպես ասում ե Հնադրույն պատմվածքը Կուլիկովյան ճակա-  
տամարտի մասին, ճակատամարտի սկզբում իրենից հանեց իշխա-  
նական գդեստը, այն հազդրեց իր սիրելի բոյարին՝ Բքենիին և  
նստեցնելով նրան իր ձիու վրա՝ թողեց մեծ իշխանական գրո-  
շակի մոտ։ Շարքային զինվորի հաղուստով Դիմիտրի Խլանովինը  
կանգնեց առաջավոր գնդում ճակատամարտին անմիջապես, մաս-  
նակցելու համար։

Փամի տասերկուսին Կուլիկովի Հարավ-արևելյան կողմից  
գտշուում յերեացին թաթարական զորքերը, վորոնք քանակապես  
զգալիորեն զերակշռում եյին ուստական զորք Համեմատու-  
թյամբ՝ Պատրաստվելով արշավի Մոսկվայի դեմ՝ Մամայը բոլոր  
միջոցները ձեռք եր առել իր ուժերը շատացնելու համար։ Նախ  
և առաջ նա զաշինք կնքեց Ոլեդ Ռյազանսկու և Ըստվայի իշ-  
խան Յաղալոյի։ Ենու։ Զորահավաքի յենթարկելով բոլորը, ինչ  
չնարալոր եր Վոսկե Հորդայում, նա մեծ քանակությամբ վար-  
ձու զօրքեր ներդրավէց՝ պոլովցիներից, յասերից, Հայերից,  
Ղըմի զենուազներից և այլն։ Կուլիկովյան ճակատամարտին  
մասնակցած թաթարական զորքի ճիշտ քանակն իմանալը շատ  
դժվար է, այնուամենայնիվ այն հաշվուում եր 250-ից մինչև 300  
հազար մարդ, վորը գերակշռում եր Դիմիտրի Խվանովիչի ուժե-  
րից վոչ պակաս քան յերկու անգամ։ Ինչելով բարձր կարմիր  
ուրից՝ թաթարները գանգաղ շարժվում եյին։ Թաթարական զոր-  
քի կենտրոնում եր Մամայի վարձած զենուեզական գունդը։ Կող-  
քերից վական քան յերկու անգամ։

Մուգ հաղուստը, աև սաղավարքները և թաթարական զինվարների վահանները Մամայի դորքին մոռայլ, չարազուշակ տեսք էլին տալիս :

Սարսափելի յեր տեսնել, առում և պատմվածքը, թե ինչպես  
յերկու մեծ ուժեր արյունհեղության ու մօտալուց մահի յեն  
բախփում:



Թուսական և թաթարական զորքի դասավորումը  
Կուլիկովյան ճակատամարտից առաջ:

Սատենալով իրաբ՝ թաթարական և սուսական զորքերը կանգ առան։ Պատմվածքի ստեղով, ճակատամարտից առաջ, այն ժամանակվա սովորույթի համաձայն, մենամարտ եր տեղի ունենում։ Թաթարներից դուրս յեկավ հսկա Տէլեբեյը, իսկ սուս զինվորներից՝ մարտիկ-ապելա Պերեսվետը։ Քշելով ձիերը՝ հակառակորդներն ամբողջ ուժով ընդհարվեցին նիզակներով։ Ուժեղ հարվածից ձիերը նստեցին հողի վրա, իսկ յերկու հսկաները մեռած ձիերից փայտ ընկան։

Իսկույն և իթ փողերի բարձր հնչյումները և մարտնչող ձայներն ազդարարեցին ճակատամարտի սկավելը:

Թաթարներն իրենց գլխավոր հարվածն ուղղեցին ռաւսական զորքի մարտական գծի կենտրոնին:


Առաջապոր գունդը, վորտեղ գտնվում եր Դիմիտրի Իվանո-  
վիչը, Ընդունեց թաթարների առաջին զրոհը։ Հիտեակի ընտիր  
Դարքը խիզախորեն մարտնչում եր թաթարների հետ՝ առանց մի  
քայլ իսկ հետ նահանջելու։

«... Նիգակները ցողունի պես ջարդվում եյին, նետերը անձը պես թափվում եյին, փոշին փակում եր արեի ճառագայթները, արերը փայլատակում եյին կայծակի նման, իսկ մարդիկ թափվում եյին ինչպես խոտը գերանդուց : Արյունը ջրի պես թափվում եր և առվակներով հօսում...» :

Սակայն թաթարական զորքերի քանակական գերակշռությունը շատ մեծ էր: Շուտով ոռուսական հետևակի զորքն ամբողջովին ընկապ տեղն ու տեղը: Հերոսական առաջախոր գունդը հրատական մահով ընկնելուց հետո, թաթարական զորքերը հնարավորություն չունեցան ընդդրկել թերերը և ամբողջ ուժով հարձակվեցին մեծ դնդիք վրա: Նորից սկսվեց ձեռնամարտը: Արյունը առվակներով հոսում էր ամբողջ գաշտով և խոր թափանցում հողը: Այնքան նեղվածք էր, վոր զինվորները չնչահեղ իջին լինում: Յերկու կողմից ել շատ զինվորներ եյին վոչնչանում ձիերի սմբակների տակ:

«Վազ միայն մարտնչողների վենքերից, ասում ե պատմվածքը, —այլ և իրենց սեփական հարվածներից և ճիերի վոտքերի տակ ելին մահանում և նեղվածությունից շնչակտուր լինում կուլիկովո դաշտում»:

Կովողների մարտական, մոլեղին ձայները, զենքերի շաջունը, վորոտացող փողերը—բոլորը միախառնվելով խլացող զզբրդյուն եր գառնում։ Դիակների շատությունից ձիերը հազիկառիւմ են իին։ Նեզմածությունն այնքան շատ եր, վոր մարտըն-



չողները ձախ ձեռքով բունում եյին հակառակորդին, իսկ աջով  
խփում և խոցում:

Թաթարները ճեղքելով գլխավոր գիծը՝ հասան մեծ իշխանի  
գրոշին և կտոր կտոր արին այն; Բոյար Բըենկն սպանվեց: Սա-  
կայն քիչ ժամանակից հետո պահեստազորում սպասող նըյան-  
սկի, Սուզդլալի և Վլադիմիրի ջոկատները ճակատամարտի մտան  
և ստիպեցին թաթարներին նահանջել: Նրանց հարձակումը կենտ-  
րոնի վրա հետ մզկեց և մարտակարդի գլխավոր գիծը վերականգ-  
նվեց: Այստեղ անհաջողություն կրելով՝ թաթարները խիտ շար-  
քերով անցան ձախ թերը: Ուժեղ գրոհով նրանք զեն շպրտեցին  
ձախ թեր գունդը: Դրանց հրամանատար իշխաններ իշխողեր-  
ոկիներն սպանվեցին, և դունզն սկսեց արագորեն նահանջել զե-  
զրով նեպրյաղվայի կողմը: Կարծելով թե ահա հիմի իրենք բաց-  
ված ճեղքով կանցնեն ոռուսական զորքի թիկունքը՝ թաթարները  
հաղթական տոնով, բարձրաձայն հոնդրումով պանում եյին նա-  
հանջողների հետեւից: Դարանում սպասող հեծյալ ջոկատն ան-  
համբեր ձգտում եր ճակատամարտի: Սակայն փորձված զորավար  
Բորբոկն սպասում եր ամենի հարմար բուպեյի և զաղում եր ան-  
համբերներին: Ենք ցերեկվա ժամի մոտ 3-ին, թաթարները  
հետապնդելով ձախ ձեռքի գնդին՝ շուռ յեկան և դարձնը թողին  
իրենց թիկունքում, Բորբոկը հանկարծակի հարձակվեց նրանց  
վրա: Թաթարները շփոթվեցին և անկանոն ձևով փախուստի գի-  
մեցին: Ռուսական նահանջող զորքն իրեն կարգի բերեց և անցավ  
հարձակման: Ճակատամարտի յելքը վորոշված եր: Դարանակալ  
զնդի և վրա հասած գլխավոր ուժի գրոհից թաթարները նահան-  
ջեցին դեպի Կարմիր բրակը, վորտեղից Մամայը շրջապատված  
բարձր աստիճանակորներով զիտում եր ճակատամարտի ընթաց-  
քը: Տեսնելով իր զորքերի պարառությունը, նա վորքաքանակ մի  
ջոկատով փախավ: Ռուսական զորքերը մինչեւ Կրասիլի Մեշ զե-  
տը 30 վերստ անդադար հետապնդեցին թաթարներին: Այսպիս  
վերջացավ Կուլիկովյան հոչակավոր ճակատամարտը:

Ռուսական զորքերն այդ ճակատամարտում հաշակվեցին քա-  
ջությամբ և անսովոր հերոսությամբ, իսկ զինվորական պետքերը  
խորապես մասնակած ստրատեգիայով ու տակտիկայով, վորովհե-  
տեւ մարտի հաջողությունը զգալիորեն կախված եր թերը խե-  
լացիորեն և վարպետորեն ապահովելուց, պահեստի ուժի նպա-  
տակահարմար ու ճիշտ տեղաբաշխումից և ժամանակին նրանց  
մարտի հանելուց: Թագմական զորքի և ուղղմական պատմության

ժամանակետների գնահատությամբ (Գոլիցին Ս. Ն., Մասլովսկի  
Դ., Միխնեվիչ Ն. Պ. և ուրիշները), Կուլիկովյան ճակատամարտը  
XIII—XIV դարի ոռուսական ուազմական արվեստի լավագույն  
նմուշն ե: Կուլիկովյան ճակատամարտը ցույց տվեց, վոր բաց  
գաղտում ոռուսները կարող են հաղթանակել թաթարներին:

Թաթարներին հետապնդելը դադարեց միայն յերեկոյան մոտ:  
Աշնանային արեն արդեն թերվել եր դեպի արևմուտք, յերբ  
Վլադիմիրի Անդրեյեվիչը կանդնելով մեծ իշխանական գրոշի մոտ՝  
կարգադրեց փողհարել Հավաք: Այդ արյունահեղ ճակատամար-  
տից անվնաս աղատաված զինվորներն ուրախալի, հաղթական ձայ-  
ներով հավաքվում եյին Կուլիկովյան ամբողջ դաշտի վրա տա-  
րածվող հավաքակոչի ձայնով: Հենց այդտեղ, Կուլիկովյան գաշ-  
տում, անթիվ սպանվածների մեջտեղը կանգնած հաղթողները  
Վլադիմիր Անդրեյեվիչին կոչեցին «Քաջ»:

Սակայն Դիմիտրի Իվանովիչը վոչ մի տեղ չեր յերեսում:  
Յերկար վորոնումներից հետո, վերջապես, նա զանվեց կտրված  
ծառի տակ ուշագնաց պառկած: Նրա զինազդեհուն ամբողջովին,  
ծածկված եր թշնամու հարվածներից առաջացած կտրվածքնե-  
րով: Մարտնչելով թաթարների զեմ՝ նա հարվածվեց նրանց զրո-  
հի ժամանակ և զրկվելով զգացողությունից՝ յերկար ժամանակ  
անշարժ պառկել եր: Զինազդեհունը նրան պահպանել եր վերքից:  
Ռւշքի դալով, նա չըջեց ճակատամարտի դաշտը:

Մասյալ պատկեր նիրկայացալ նրա աչքելին: Ամենուրեք,  
ուր նա զիտում եր, թափված եյին ոռուսական սպանված: զինվոր-  
ների կույտեր, վորոնց մեջ տեսնում եր իրեն մոտիկ մարդկանց  
զիակները: Մեզ հասած տեղեկություններով, վորոնց ստուգումը  
հնարավոր չէ, Կուլիկովյան գաշտում յերկու կողմերից սպանվեց  
մոտ 200 հազար մարդ: Ռուսական զորքը կորցրեց իր կազմի  
կեսը: Հսկայական այդ կորուստը խիստ մոռյլեցրեց հաղթական  
զորքի հանգեցը: Կուլիկովյան ճակատամարտի մասին Ռուսաս-  
տանի տարրեր ծայրերում ստեղծված պատմությունները նկարու-  
գում են այն վորպես ոռուս ժողովրդի մեծաղույն հաղթանակը,  
որա հետ մեկնեղ մեծ թափիծով ու տիրությամբ են խոսում  
անթիվ սպանվածների մասին: «Ռուսական հողը—ասում ե տա-  
րեկիրը—այդ ճակատամարտից հետո աղքատացավ համանա-  
տարներով, սպասավորներով և ամեն տեսակի դիմուրտականու-  
թյամբ»:

Հաղթանակի ուրախալի լուրը տանելու համար հեծյաներ  
ուղարկելով բոլոր իշխանությունները և քաղաքաները՝ Դիմիտրի

իվանովիչը ձեւարկեց մարտում ընկածներին թաղելու գործին։ Կուլիկովյան ճախտամարտի պատմվածքը, գունեղ պատկերելով այդ հուղարկավորությունը, առում ե, վոր Դիմիտրի իվանովիչն ինքն եր հաշվում սպանվածների թիվը և հրաժեշտ տալով նրանց, թափիծով ասում եր. «Ձեղ վիճակված եր ընկնել այսեղ, Դոնի և Դնեպրի միջև, Կուլիկովյան դաշտում, Նեպրյազվագետակի վրա։ Այսուղ դուք ձեր գլուխը դրիք… ոռւսական հողի համար»։

Ութ որ ոռւսական զորքը հավաքում եր սպանվածների դիակները, սակայն դարձյալ մեծ քանակությամբ դիակներ մնացին առանց թաղելու։

Լիտվայի իշխան Յաղայլոն, վոր դանվում եր Կուլիկովյան դաշտից 30—40 վերստի վրա, յերբ իմացավ Մամայի պարտությունը, արագորեն հավաքեց զորք և դնաց Լիտվա։ Ոլեդ Ռյազանսկին փախավլ նրա հետ։

Դիմիտրի իվանովիչի վերադարձը Մոսկվա վերածվեց համաժողովրդական տոնի։

Բնորդին համակած ուրախությունը հաղթական զորքի վերադարձի ուղին հանդիսավոր յերթի վերածեց։ Զանգերի հանգիստոր զողանը նրանց ուղեկցեց մինչև Մոսկվա։ Դիմիտրի իվանովիչն ուղեց Մոսկվայից իսկույն և նույն զորք ուղարկել Ռյազանի յերկրը՝ ոյազանցիներին դավաճանության համար պատելու, սակայն Ռյազանի բոյարների պատղամալիորությունը նրան հայտնեց Ոլեդի փախուստի մասին և ոյազանցիների հայտության ու ցանկության մասին՝ Մոսկվայի իշխանին հնագանդվելու։ Շուտով Ռյազան վերադարձավ նաև ինքն Ոլեդը։ Կեղծավորաբար զջալով, նա նորից ներումն խնդրեց Դիմիտրի իվանովիչից, վորը վերադարձնելով նրան Ռյազանի իշխանությունը՝ նրա հետ զաշն կնքեց։

Մամայը ջախջախված զորքի մնացորդների հետ փախավլ դեպի Կալկո գետի ափերը, վորան հանդիպեց իր տիոյան Տոխտամիշին։ Թաթարական յերկու բանակների ճակատամարտը վերջացավ Մամայի լիախուար ջախջախումով։ Նա փախավլ Կաֆա (Հիմա՝ Թեսդոսիա), ուր չուտով սպանվեց։

Վոսկե Հորդայում իշխեց Տոխտամիշը, վոր Մամայի դեմ տարած իր հաղթանակի մասին լուր սուզարկեց Մոսկվա Դիմիտրի իվանովիչին և ոռւսական մյուս իշխաններին։ Տոխտամիշը բարյացակամ ներկայացուցչությունը Մոսկվայում ընդունվեց մեծ հանդիսավորությամբ և հարգանքով։ Ներկայացուցչությունը բո-

լոր մասնակիցները հարուստ նվերներ ստացան, սակայն վոչ Դիմիտրի իվանովիչը և վոչ ել մյուս իշխաններից վորեմ մեկը չգնաց Վոսկե Հորդա։ Հաջորդ տարին՝ 1381 թ. Տոխտամիշը Մոսկվա ուղարկեց յերկրորդ ներկայացուցչությունն արքայազն Ակինողի զլիավորությամբ։ Յերբ այդ ներկայացուցչությունը Նեմնի-Նովգորոդ հասավ և իմացավ, վոր չի ընդունվի, չհամարձակվեց շարունակել ճանապարհը և վերադարձավ Սարայ։ Սրանից հետո Տոխտամիշը ուժով վերականգնել Մոսկվայի նախկին կախումը Վոսկե Հորդայից։ Դիմիտրի իվանովիչին նախապարաստվելու ժամանակ չտալու համար, նա իր ջոկատներն ուղարկեց միջին Պոլովչյե և կարգադրեց՝ այսուղ բռնել ոռւսական բոլոր վաճառականներին, վորպեսզի Մոսկվան չիմանա նրա դուռքի շարժման մասին։

Ժամանակ չկորցնելով կողոպուտների համար, վորով ճանապարհին սովորաբար զբաղվում ելին թաթարական զորքերը, նա փոխադրվեց Վոլգայով և արագորեն զնաց դեպի Մոսկվա։ Ռյազանի յերկրի սահմաններում նրան դիմավորեց Ոլեդը։ Լիակատար հնազանդություն հայտնելով Տոխտամիշին, նա թաթարական զորքը տարավ Սերպուխով, վոր անմիջապես թալանի մատնվեց։

Տոխտամիշի հաշիմները ձիչտ դուրս յեկան։ Հանկարծակի դալով՝ Դիմիտրի իվանովիչը չկարողացավ անմիջապես հավաքել և Տօխտամիշի դեմ դուրս բերել անհրաժեշտ քանակությամբ զորք։ Մեկնելով Մոսկվայից՝ Դիմիտրի իվանովիչը զորք հավաքելու համար սկզբից զնաց Պերեյալավլ, իսկ հետո կոստրոմա։

Մոսկվան յեռանդուն պատրաստություն եր տեսնում մոտեցող թշնամուն հանդիպելու համար։ Նետերից պաշտպանվելու համար հրակնատների (պարիսպների բարձր ատամների) միջև դրված ելին հաստ տախտակներ։ Հրակնատների և նրանց միջանցքներում պատրաստած տախտակապատների հետևում հարճակումը հետ մզելու համար լիախատար պատրաստի վիճակում, մեծ կաթսաներում յեռում եր ջուրը։ Ենուացող ջուր պետք ե շատ լիներ, վորովհետեւ այն լցնում ելին չըջապատողների վրա, յերբ նրանք բարձրանում ելին պատերից։ Այսուղ ել, հրակնատների հետևում դարսված ելին բավական քանակի այլ զործիքներ—մեծ քարեր, քարազներ, ինքնաճիքներ։ Զորքերի մի մասը զինված եր թվանքներով (Հրացաններով)։ Կրեմլի պարիսպների վրա առաջին անդամ թնդանոթները դրվեցին։ Մարտական գործիքների քանակը և վորակն ապահովում ելին կրեմլի պարիսպների պաշտպանություն

նը և այն գարձնում անառիկ։ Մարդկանց պակասն ել չկար, վորովհետև թաթարների մոտեցման առաջին խկ լուրից հետո մոտակա ավանների և գյուղերի բնակիչները շտափեցին իրենց ամբողջ ունեցվածքով թագնվել կրեմլի պարիսպների հետեւ։

Այն ժամանակներում շատ հաճախ, պաշարված քաղաքը դրավելու համար, գործադրվում եր նրա հրդեհումը զանազան կողմերից։ Այդպիսի հրդեհում կատարելու համար պետք եր կամուրջներ կառուցել՝ քաղաքի շուրջը փորված լավն և խոր փորվածքից անցնելու համար։ Մերձենալու այդ յեղանակը կոչվում եր այրելով մոտենալ։ Մոսկվացիները միանդամայն իրավացիորեն յերկյուղ եյին անում, վոր Տոխտամիշը տեսնելով կրեմլի պարիսպների անառիկությունը, կուգենա ռգտվել այրելով մոտենալու յեղանակից։ Այդ կանխելու համար նրանք այրեցին քաղաքամերձ բոլոր ավանները։ Մոսկվայի շրջակայքում վրչ մի գերան, վոչ մի չափառ չեր մնացել, և դրանով խկ թաթարները զրկվել եյին այրելով մոտենալու համար անհրաժեշտ փայտանյութից։

Բոլոր այդ միջոցանումներն ապահովում եյին դամբք վտանգի հաջող հետմղումը։

Թաթարների գալուց դեռ շատ առաջ շատ բոյարներ և հարուստներ ուղղում եյին թողնել քաղաքը։ Այդ մտադրությունն արտահայտող առաջիններից մեկը միտրոպոլիտ Կիպրիանն եր, վորից հետո գալիս եյին նրա մերձավորները։

Ամոթալի այդ փախուստը. միանդամայն արդարացի վրդովմունք առաջացրեց բնակչության մեջ։ Քաղաքում սկսվեց ալեկոծում։ Զանգերի կանչից ամբողջ ժողովուրդը հավաքվեց հրապարակում և հակառակ բոյարների և հոգեորականության կարծիքի, վորոշեց պաշտպանել Մոսկվան և թույլ չտալ, վոր խան Տոխտամիշը գրավի այն։ Քաղաքը թողնել ցանկացողների մի մասին բաց թողին։ Մոսկվայի պահպանությունն անցավ իրեն ժողովրդի ձեռքը։

Պաշարելով Մոսկվան՝ Տոխտամիշը շուտով համոզվեց, վոր անհարին և այն գրամել դուռըթով։ Յերեք որ նրա զորքերը փորձում եյին մոտենալ կրեմլի պատերին, բայց յուրաքանչյուր անդամ ստիպված եյին մեծ կորուստով նահանջել։ Տեսնելով իր փորձերի անարդյունավետությունը, Տոխտամիշը դիմեց թաթարական զրավարների համար սովորական մեթոդին, այսինքն իսարդակի կեղծալորության և խարեւության, այդ նպատակի համար ուղարկործելով մի քանի նենդ դավաճանների։ Նրա ուղար-

կած պատվիրակությունը հայտարարեց, վոր Տոխտամիշը չանականում ավերել Մոսկվան, վոր նա յեկել ե անհնազանդության համար պատժելու վոչ թե ժողովրդին, այլ Դիմիտրի իվանովիչին։ Միակ բանը, վոր նա պահանջում է մոսկվացիներից—գոյն հնազանդությունն ե։ Իմանալով, վոր թաթարները հաճախ են դիմում խարեբայության, մոսկվացիներն այդ հայտարարության անվտանգությամբ վերաբերվեցին։ Այդ ժամանակ թաթարական պատվիրակության ուժանդակելու հանդես յեկան յերկու դավաճաններ—Մուղդալի իշխաններ Վասիլին և Սեմյոնը, վորոնք յերդումով հավաստիացնում եյին, թե նրանց ամբողջ ասածը զուտ ճշմարտություն ե։

«Հավատացեք մեզ,—հայտարարում եյին այդ գավաճանները,—մենք ձեր քրիստոնյա իշխաններն ենք. մենք յերաշխալուրում ենք, վոր դա ճշմարտություն ե։»

Թաթարներից և դավաճաններից խարված մոսկվացիները վորոշեցին բացել գարպասները և Տոխտամիշին նվերներ հրամցնել։

Հենց վոր կրեմլի դարպասները բացվեցին, թաթարական զորքերը հարձակվեցին մոսկվացիների վրա և ջարդելով բոլորին, ովքեր ընկան ձեռքները, խուժեցին քաղաքը և սկսեցին թալանել այն։ Հետո թաթարական ջոկատները ցըլեցին բոլոր քաղաքները։ Այդպիսի ջոկատներից մեկը, հանդիպելով Վալեհի միր Անդրեյելիչին, վորը մեծ զորքով կանգնած եր Վոլոկի մոտ, գլխովին ջարդվեց նրա կողմից։ Լուր ստանալով այդ մասին, Տոխտամիշը սկսեց նահանջել։

Վերադառնալով Մոսկվա, Դիմիտրի իվանովիչին այն ամայացած տեսապէ։ Բոլոր փողոցներում թափված եյին սպանված մոսկվացիների դիակները։ Տարեգրային գրանցումներն ասում են, վոր սպանված եր մոտ 24 հազար մարդ։

Ուժասպառ յեղած, Դիմիտրի իվանովիչին ստիպված եր ճանաչել Մոսկվայի կախումը Վոսկե Հորդայից և նորից ծանր տուրք վճարել։

Կուլիկովյան ճակատամարտի մեծ նշանակությունը դրանով բոլորովին չի նսեմանում։ Զրերելով ոռու ժողովրդին վերջնական պատագրում ոտար լծից, այնուամենայնիվ, նա հանդիսացավ չը ջարդարձային փուլ Մոսկվայի և Վոսկե Հորդայի հարաբերությունների միջև։ Նախ և առաջ նա ցրեց թաթարական զորքի անպարտելիության մասին վաղուց առաջացած, համարյա սնոտիապաշտության հասած կարծիքը։ Կուլիկովյան ճակատամարտը բարձրացրեց Մոսկվայի և նրա իշխանի հեղինակությունն ամ-

բողջ հյուսիս արևելյան Ռուսիայի ժողովրդական մասսաների մեջ։ Առաջ անպարտելի թվացող թաթարներին հաղթող Դիմիտրի Իվանովիչը՝ ժամանակակիցների կողմից կոչվեց Դոնսկոյ։ Կուլիկովյան ճակատամարտի հետ կազմած բոլոր գեղքերը, ինչպես և այդ ճակատամարտն ինքը ցույց տվին, վոր ազգային ինքնուրույնության համար մղվող պայքարի կենտրոնը հանդիսացալ է կարող եր հանդիսանալ միայն Մոսկվան։ Նույն դեպքերը ցույց տվին, վոր ռուս ժողովրդի սկզբած ազգային միավորումը, ռուսական հողերի ֆեռդալական մասնատվածության ստափմանական վերացումը և պետականության ամրապնդումը ռուսական ժողովրդին դարձնում ելին ուժեղ, հզոր, իր ազգային ազատությունը պաշտպանելու պատրաստ և ընդունակ։

Այդ յերկու պրոցեսները—ազգային միավորում և պայքար ազգային անկախության համար—սերտ կազմած ելին իրար հետ։ Ատարերկրյա լծից վերջնականապես ազատադրվելու համար նախ և առաջ անհրաժեշտ եր վերացնել ֆեռդալական մասնատվածության բոլոր մնացորդները և ուժեղ կենտրոնացված պետականություն ստեղծել։

Ընկեր Ստալինը «Մարքովիդը և ազգային գաղութային հարցը» իր կլասիկ աշխատության մեջ այդ անհրաժեշտության մասին հետևյալն է ասում. «...Թուրքերի, մոնղոլների և Արևելքի այլ ժողովուրդների արշավանքներից պաշտպանվելու շահերը պահանջում ելին անհապաղ ստեղծել արշավանքների ճնշումից պահանջող կենտրոնացված պետություններ»<sup>1</sup>։

Կուլիկովյան ճակատամարտից հարյուր տարի հետո, Իվան III-ի իշխանության որով (1462—1505 թ. թ.) Մոսկվայի իշխանության ներքո, վորը վերջնականապես իրեն յենթարկեց ռուսական ֆեռդալական բոլոր իշխանությունները և դադարեցրեց վորեւ տուրքի վճարումը Վոսկե Հորդային, ստեղծվեց ռուսական ազգային հզոր պետություն։

Յարոսլավի և Թուստովի փոքր իշխանությունները հոժարակամ ընդունեցին Մոսկվայի մեծ իշխանի գերիշխանությունը։ Նրանց տիրակալության ներքո թողնվեցին միայն տոհմական հողերը։ Մյուս ամբողջ տերիտորիայի տերը դարձավ Մոսկվայի իշխանը։

Իվան III-ի թագավորության ժամանակ ֆեռդալական մեծ



<sup>1</sup> Ստալին — Մարքովիդը և ազգային գաղութային հարցը, եջ 73, Կուսակը, 1937 թ.։

իշխանություններից ինքնուրույն եյին մնացել միայն յերկուսը—  
Տվերինը և Ռյաղանինը։ Իր ինքնուրույնությունը սրահանել եր  
նաև Նովգորոդը, վոր ըստ Եյության նույնպիսի Փեռզալական  
պետություն եր, միայն այն տարբերությամբ, վոր այստեղ իշ-  
խանությունը պատկանում եր վոչ թե իշխանին, այլ խոչոր Ֆեռ-  
դալներին—բոյարներին և բարձր հոգեորականությանը։

Իր անկախությունն առաջինը կորցրեց Նովգորոդը։ Մոսկ-  
վայի հետ յերկար պայքարից հետո, վորի ընթացքում Նովգորոդի  
բոյարները շատ փորձեցին հենվել Լիտվայի ողնության վրա,  
1478թ. Նովգորոդն ստիպված եր հնազանդվել և ճանաչել Մոսկ-  
վայի իշխանի տիրապետությունը։ Վեչեն վերացվեց։ Վեչեյի  
զանդն ուղարկվեց Մոսկվա։ Բոյարական արիստոկրատական նով-  
գորոդյան հանրապետությունը դադարեց գոյություն ունենա-  
լուց։

Նովգորոդից հետո իրենց ինքնուրույնությունը կորցրին  
Տվերը և Ռյաղանը։

Նովգորոդը և Փեռզալական վերջին այդ յերկու իշ-  
խանությունները Մոսկվային յենթարկվելով՝ Մոսկվայի իշ-  
խանի տնօրինությանն անցան Հոկտեմբերի յերկրաժաման։ Առաջ-  
բաժնեկալվածավոր իշխաններով ըջապատված Մոսկվայի իշխա-  
նությունն սկսեց հիմա սահման ունենալ արտաքին պետություն-  
ների հետ։ Հյուսիսում Հասնելով Սպիտակ ծովը, Մոսկվայի հո-  
գերն արևելքում տարածվում եյին Ռւրալից մյուս կողմը, Հյու-  
սիս-արևմուտքում մոտեցան չվերական հողերին, իսկ Արևելքու-  
մում սահմանակցում եյին լեհ-լիտվական և գերմանական հողե-  
րին։ Այս ամենը արմատապես փոխեց Մոսկվայի պետության  
վոչ միայն ներքին, այլև արտաքին քաղաքականությունն ու  
դրությունը։ Այս ժամանակից սկսած Մոսկվայի իշխաններն  
իրենց վրա վերցրին ամբողջ ուստական հողի պաշտպանությունը  
թշնամական հարձակումներից, այսինքն կատարեցին համագու-  
յին նշանակություն ունեցող խնդիր։ Աղքային միակորման քաղա-  
քականությունն այդ ժամանակից նույնպես բոլորովին այլ  
բնույթ ստացավ։ Յեթե առաջ Մոսկվայի իշխանները ձգտում  
եյին իրենց ըջապատող նույնաման Փեռզալական իշխանու-  
թյունների «հողերը յուրացնել», ապա հիմա հարցը վերաբերում  
եր ուստական այն հողերի վերադարձմանը, վորոնք իրեն ժամա-  
նակին ուժով գրավել եյին ուստարեկրացիները։ Անցյալում  
դրավված այդ հողերի բնակչությունը չեր թագցնում իր համա-  
կրանքը Մոսկվայի իշխանության հանդեպ և իր ձգտումով դեպի

Մոսկվան, վորաբես ռուսական ժողովրդի ազգային միավորման կենտրոն, հեշտացրեց Մոսկվայի իշխանների առջև ծառացած նոր խնդիրների լուծումը:

Փոքր իշխանություններից շատերը, վորոնք գտնվում եին կիտվայի տիրապետության ներքո, Վյազմակի, Նովոսիլչկի Ռոյնեվսկի, Վորոտինսկի և Բելսկի իշխանները, — անցան ծառայության իվան III-ի մոտ և նրան հանձնեցին իրենց հողերը:

Այս կապակցությամբ Մոսկվայի իշխանության և կիտվայի միջև 1500 թ. բռնկված պատերազմը յերեք տարուց հետո վերջացավ հաշտությամբ, վորի համաձայն լիտվական իշխան Ալեքսանդրը ճանաչեց Մոսկվայի իշխանության իրավունքը նրան անցած բոլոր հողերի նկատմամբ: Բանակցությունների ժամանակ Ալեքսանդրն ասաց՝ թեպետ և ինքը տալիս ե այդ հողերը, այնուամենայի ցավալի յե նրանցից զրկվելը:

Շատ բնորոշ ե իվան III-ի պատասխանը կիտվայի իշխանի այդ հայտարարությանը: «Իսկ ինձ—ասաց նա—մի՞թե ցավալի չեիմ հայրենական կալվածքի—ուստական հողի համար, վորը կիտվայի ձեռքումն եկիեւ, Սմոլենսկի և ուրիշ քաղաքների համար»:

Իվան III-ի իշխանության որով վերջնականապես վերացալ թաթարական լուծը Ռուսիայի վրայից: Դժողով նրանով, վոր իվան III-ը դադարեցրեց տուրքի վճարումը, վոսկե-հորդայական իշխան Ահմատն 1480 թ. մեծ զորքով դուրս յեկավ Մոսկվայի դեմ:

Մոսկվայի զորքերը նրան հանդիպեցին Ուգրա գետի ափերում: Մասնելով բանակցությունների մեջ Ահմատի հետ, իվան III-ը դրա հետ մեկտեղ համոզեց իր դաշնակցին, Ղրիմի իշխան Մենգի-Գիրեյին, հարձակվելու վոսկե Հորդայի մայրաքաղաք Սարայի վրա: Իմանալով այդ հարձակման մասին, Ահմատն շտապեց վերադառնալու իր տիրապետությունը:

Թաթարական լծի ծանր, մոայլ ժամանակները վերջացան:

Դեն նետելով թաթարական լուծը, իվան III-ը միահեծանի տիտղոս ընդունեց, այսինքն թագավորի, վորն անկախ և վորել վե այլ տիրակալից և վոչ վոքի տուրք չի վճարում:

1453 թ. թուրքերը նվաճեցին Բյուզանդիան: Թաթարական լուծը տապալելուց հետո Մոսկվայի իշխանը դարձավ միակ անկախ ուղղափառ թագավորը: Դա հնարավորություն տվեց նրա իշխանության ամրապնդմամբ շահագրգուված ամեն մեկին՝ նրան դիտել վորպես Բյուզանդիայի կայսրների հաջորդ: Իվան III-ի

ամուսնությունը Բյուզանդիայի վերջին կայսրի յեղարք աղջկա Սոֆիա Ֆոմինիչնա Պալեռոլոգի հետ՝ ամբացնում եր այն կարծիքը, թե Մոսկվան Բյուզանդիայի հաջորդն ե: Այս կապակցությամբ իվան III-ն իր արքունիքում ճոխ հանդես կազմակերպեց, վոր հիշեցնում եր Բյուզանդիայի արքունական սովորությները: Վորպես ժառանգություն, իվան III-ը 1497 թ. ընդունեց բյուզանդական զինանիշը՝ յերկալիսամի արծիվը:

Բաժնեկարգածքային իշխանությունից Մոսկվան վերածվեց հզոր պետության, վոր դիպլոմատիական հարաբերության մեջ եր արտաքին մի շարք պետությունների հետ—Դանիայի, Հունգարիայի, Վենետիկի, Թյուրքիայի հետ և այլն:

Մարքսը «18-րդ դարի գաղանի դիպլոմատիան» հողվածում տվել է մոսկվյան կենտրոնացած պետության առաջացման յերկարամ պրոցեսի այլ յեզրափակալիք մոմենտի գունդը նկարագրությունը.

«Իր իշխանության վերջում իվանը միանգամայն անկախ կայսր ե գառնում, նրա կինը ե գառնում Բյուզանդիայի վերջին կայսրի յեղարք աղջիկը: Կազմանը նրա վոտքերն ե ընկել, և Վոսկի Հորդայի մնացորդները ձգտում են գեպի նրա արքունիքը: Նովդորոշը և մյուս ծովով դիպլոմակառավարչությունները հնագանուեցված են: Լիտվան նվազել ե և նրա մեջ իշխանը դարձել ե խաղաղեք իվանի ձեռքին: Լիտվական ասպետները հաղթված են:

Զարմացած Յեկարպան, վոր իվան III-ի թագավորության սկզբում հաղիկ թիւ յենթագրեր, թե լիտվացիների և թաթարների մեջ մոսկվյան պետություն կա, թե միանգամից շմեց իր արքեւուան սահմաններում հակայական կայսրության հանկարծակի առաջացումով: Ինքը Սուլթան Բայազետը, վորի առջև դողում եր Յեկարպան, տուաջին անդամ հորարտ խոսք լսեց մոսկվացուց»:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ե

1. Առաջին բնդկաբուժը թաթարների հետ . . . . .	3
2. Ավքեր Եյին թաթարները, վարակից և ինչպես նրանք յերեացին ուսւ-	5
ամական հողի վրա . . . . .	
3. Մուսական հողը թաթարական արշավանքից առաջ . . . . .	11
4. Բատուի արշավանքը . . . . .	18
5. Թաթարական լուծը . . . . .	23
6. Մոսկովյան մուսիխան 14-րդ դարի 2-րդ կեսին և վոսկե Հորդան . . . . .	28
7. Իշխան Դիմիտրի Խվանովիչ Դոնսկոյը և վոսկե Հորդան . . . . .	34
8. Կուլիկովյան ճակատամարտը . . . . .	46

Թարգմանիչ Հարուբյան

Խելագիր Ս. Հակոբյան

Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան

Սրբագրիչ Ս. Մանուկյան

Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավիտի լիազոր № Ն 2907, հրատ. № 735

Պատմիր № 193, ակտաժ 5000

Թղթի չափոր 60×291/16 (38.400 տպ. նիշ 1 տպ. մամուլութ)

4 տպ. մամուլ, 2 թերթ թուղթ.

Հանձնված է արտադրության 8/X 1939 թ.

Սառըադրվել է ապագրելու 2/XI 1939 թ.

Գիր 1 ռ. 50 կ.

Գնուհրատ—Թագաքական գրտկանության հրատարակության տպարան  
Երևան, Ալահիբերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0403579

4-160 1 л. 50 ч.

Б. В. ФЕДОРОВ  
КУЛИКОВСКАЯ БИТВА

Государственное издательство «Искусство»  
Москва 1929